









ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԵԴԱՐԱՆ

Կ Զ Կ Ե Զ

ՔԵՐՈՎԲԷ ՊԱՏԿԱՆԵԱՆ
ԴՈՐՊԱՏՈՒՄ

26

ԳՐԵՑ

ԱՐՏԱՇԷՍ ԱԲԵՂԵԱՆ



ՎԻԵՆՆԱ

ՄԻԼԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1949

26/11/53
K. 94/15
26/11/53
26/11/53
26/11/53

692

175

371/47.925/

Պատկանյան թ.

3

Աբգղյան, Ա.

Պատկանյան Դռը-

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ՔԿԱ.

NATIONALBIBLIOTHEK

BAND CLXI

CHERUBIM PATKANIAN IN DORPAT

VON

ARTASCHES ABEGHIAN



WIEN

MECHITARISTEN-BUCHDRUCKEREI

1949

ՔԵՐՈՎՔԻ ՊԱՏԿԱՆԵԱՆ ԳՈՐՊԱՏՈՒՄ

Ն. ՀԱՄԱՐՈՑ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԺԵՐ
Ք. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ

1.

Հայադիտութեան մարդում ահանաւոր
դէմքերից մէկն է Քերովքէ Պատկանեան:
Տասնիններորդ դարու երկրորդ կիսին Ռու-
սաստանի բարձրագոյն դպրոցներում դասա-
խօսած եւ սուաւերապէս ուռն լեզուով իրենց
աշխատութիւնները հրատարակած երկու
կարկաստուն անձեր ծանօթ են Հայադիտու-
թեան պատմութեան: Առաջինը Մկրտիչ
Էմիլն է, Մոսկուայի Լազարեան Ճեմարանի
երկարամեայ ուսուցչապետը, երկրորդը՝
Քերովքէ Պատկանեան, Պետերբուրգի հա-
մալսարանի արեւելագիտական բաժնի հայա-
դէտը: Մի սրուշ չափով՝ դրանց վրայ աւե-
լոցներ կարելի է թերեւս նաեւ անունը Ստե-
փանոս Նազարեանի, սկզբնապէս Հայադի-
տութեան ուսուցչապետ Կազանի համալսա-
րանի, իսկ յետոյ տեղափոխուած Մոսկուա,
Լազարեան Ճեմարան:

Եւ սակայն, մինչդեռ էմիլնի եւ Նազա-
րեանի կեանքն ու գրական-գիտական գոր-
ծունէութիւնը բաւականաչափ ուսումնասի-

բուած են, բազմաաւարար քիչ բան է գրուած Քերտովից Պատկանեանի մասին: Եւ կտրելի չէ երբեք տակ, թէ Քերտովից Պատկանեանի գրական ժառանգութիւնը ու է է չտրուի — լինի քանակի թէ որակի տեսակէտից — պահաւար թէ է ներկայացնում, քան օրինակ Մ. Էմինին:

Նկատենք այստեղ անմիջապէս, որ յիշուած երեք նշանաւոր գէմքերից երկուսը, Ս. Նազարեան եւ Ք. Պատկանեան, եղած են երբեմնի սաներ Գորպատի Համալսարանի: Այդ պարագան մասնակի շահեկանութիւն էր ներկայացնում տողերս գրողի համար, երբ նա 1939 թ. ամառը ուսումնասիրական նպատակով մի ճամբորդութեան ձեռնարկեց գէտի Գորպատ, տեղւոյն վրայ ու վաւերագրային նիւթեր ունենալով ձեռքի տակ՝ ծանօթանալու գորպատեան գաղտնի պատկանող հայ վերածննդի ուսանողական տարիներին¹: Աւելանց փայլուն հայլի մէջ առաջնակարգ տեղ են գրաւում Ս. Նազարեան եւ Ք. Պատկանեան: Մի այլ աշխատութեան նիւթ կադմելով Ս. Նազարեանի կեանքը Գորպատում, այս էջերի մէջ պիտի ներկայացնենք Ք. Պատկանեանի ուսանողութեան տարիները նոյն այդ հոգակաւոր քաղաքում: Աւելորդ չենք համարում սակայն այստեղ գլխաւոր

¹ Հմմտ. մեր «Գորպատի հայ ուսանողութիւնը» աշխատութիւնը. Հ ա ն դ. Ա մ ս. 55 (1941), 106—117, 243—256. արատաւ. Վիեննա 1942 (Այդ. Մատ. 150):

զծերով եւ համասօտակի ներկայացնել նախ-
ք. Պատկանեանի կենսադրականը առհասո-
րակ, մի բնոյհանուր զազափար տալու հա-
մար հայազէտի մասին :

2.

Քերովրէ Պատկանեան շատաւիզն էր
Պատկանեան նշանաւոր գերզատտանի, որ մի
քանի ակնհաւոր գէմքեր է տուած հոյ կեան-
քին ու գրականութեան, եւ որ առաջնակարգ
անգ է գրաւում տասնիններորդ դարու մեր
մատուրական կեանքի պատմութեան մէջ :
Բաւական է յիշատակել այստեղ անունները
Ռափայէլ Պատկանեանի եւ նրա հոյր Գար-
րիէլ քահանայի, որոչելու համար այդ գեր-
զատտանի կատարած գերը մեր մօտաւոր ան-
ցեալի մէջ :

Աերովրէ վարժապետ Պատկանեան, գեր-
զատտանի հոյրը, Կ. Պոլսից էր տեղափո-
խուած Ռուսաստան : Նրա որդիներից մէկն
էր Գարրիէլ քահանան, արեւելահոյ առաջին
աշխարհարար պարբերականի՝ «Արարատ»
չարաթաթերթի (Թիֆլիս 1851 թ.) խմբա-
գիրը, քովը ունենալով որպէս մօտիկ աշխա-
տակից իր բանաստեղծ որդին, Ռափայէլը :
Գարրիէլ քահանայի եղբայրն էր Պետրոս քա-
հանայ Պատկանեան, Քերովրէի հոյրը :
Որով՝ միեւնոյն գերզատտանի հարազատ զա-
ւակներ, հօրեղբօրորդիներ էին 19րդ դարու
նշանաւոր հոյ բանաստեղծ Ռափայէլ Պատ-

կանեան (Գամառ-Քաթիպա) եւ ոչ պակաս յայտնի հայազէտ Քերովրէ Պատկանեան :

Քերովրէ Պատկանեան ծնունդ է Նալ-Նախիջեւան քաղաքում, 1833 թուականի մայիս 4ին : Անգլրանիկ որդին էր Պետրոս քահանայի : Քերովրէի մօր անունն էր Աննա — դուստրը Յարութիւն քահանայ (հետագային՝ վարդապետ) Ալամդարեանի² : Վերջինս Թիֆլիսի Ներսիսեան Դպրոցի տաղին տեսուչն էր, անուանի դպրոցավար, ուսուցիչը Խաչատուր Աբովեանի, Ստեփանոս Նազարեանի եւ ուրիշ ծանօթ գործիչների : Այլամդարեան, Ներսէս Աշտարակեցիի գործակիցը դպրոցական ասպարէզում, ունէր նաեւ բանաստեղծական ձիրք : Տեսնում ենք ուրեմն, որ Քերովրէ Պատկանեան թէ՛ հօր եւ թէ՛ մօր կողմից մաաւորական նշանաւոր քննանիքներից էր սերում :

3.

Հայիւ մէկեւելէս տարի անց Քերովրէի ծնունդից, նրա ծնողները Նոր-Նախիջեւանից Հիւսիսային Կովկասի Ստաւրոպոլ քաղաքն են տեղափոխւում : Տէր Պետրոսը աւագ քահանայի պաշտօնն ունէր այնտեղ ու

² Ք. Պատկանեանի մասին մի քանի կենսագրական տուեալներ գտնում ենք մենք իր գորպատեան թղթածրարի մէջ (տե՛ս վարը) : Հմմտ. Իւրիյ Վսեւլովսկի՝ «Քերովրէ Պատկանեան», Քարդմ. «Ֆեաղմովէպ» 1891 թ. մայիս (էջ 139—142) եւ յունիս (էջ 176—180) թիւերը :

միեւնոյն ժամանակ գործակալ էր շրջանի հայ եկեղեցիներին :

Քերտվրէ իր ուսման ընթացքը սկսաւ Ստաւրոպոլի գիմնապիտայում : Շատ շուտով ստեղծեց, 1843 թ., տեղափոխուեցաւ Մոսկուայի Լազարեան ձեմալան, որպէս ձրիա-վարժ սան : Այնտեղ նա աչքի ընկաւ իր ընդունակութիւններով ու յատկապիտա-թեամբ, մանուսանդ լեզուների եւ պատմա-կան աւարկաների մէջ : Աշտկերտեց Մկրտիչ Իմինին :

1851 թ. յաւնուար ամսին՝ որպէս Պե-տերբուրգի հայոց եկեղեցու թուշակաւա սան՝ Քերտվրէ Պատկանեան Դորպաւա մեկ-նեց եւ նոյն ամսին մտաւ տեղւոյն համալ-սարանը : Դորպաւաւում նա մնաց ոչ իսկ եր-կու տարի : Այդ մտաին՝ վարը :

1852 թ. աշնանը Ք. Պատկանեան Պե-տերբուրգ վերադարձաւ եւ սցնտեղից շու-տով Ստաւրոպոլ մեկնեց, ուր գիմնապիտ մտաւ եւ աւարտեց 1853 թ. : Այդպիսով, հնարաւորութիւն ձեռք բերաւ նա՝ բուն իսկ սուսական բարձրագոյն վարժարան մտնե-լու : Այդպէս եւ արաւ : Նոյն սոյգ թուական-ին Ք. Պատկանեան մտաւ Պետերբուրգի Մանկավարժական Ինստիտուտը որպէս ձրի-ավարժ ուսանող, շնորհիւ հօր թափած ջան-քերին եւ օժանդակութեամբ Կովկասեան Յանձնախումբի : Չորս տարի մնալով սոյդ-տեղ՝ Ք. Պատկանեան 1857 թ., քսանեւչորս

տարեկան երիտասարդ, յաջողութեամբ աւարտեց Ինստիտուտի պատմագիտական բաժնի լրիւ դասընթացքը: Միեւնոյն ժամանակ, հիմնովին ուսումնասիրեց ուսմական ու եւրոպական գրականութիւնը: Այլ եւ ուսեալէնից, Փրանսերէնից եւ գերմաներէնից դատ, ուսաւ անգլիերէն ու իտալերէն լեզուները:

Հետաքրքրութիւնից զուրկ չեն Ք. Պատկանեանի ուսանողական տարիները Պետերսբուրգում: Այդ ժամանակները Ռուսիոյ՝ մայրաքաղաքի հոյ կեանքում կենդրանական գէմք էր Աղաբոն Ա. Բիւրեւանց՝ ունեւոր, ազգեցիկ եւ ուսումնասէր մի անձնաւորութիւն, որ հոյ ուսանողների — նաեւ զօրօրատեան հոյ ուսանողների — վերաբերմամբ յաճախ նպաստաւորողի եւ խրախուսիչի դեր է կատարել: Իր դուռը բաց էր հարցասէր հոյ ուսանողների առջեւ: Ու նրա յարկի տակ յաճախ էին հաւաքուում ուսանողներ կիրակի եւ տօն օրեր, հաճելի ու օգտակար ծամանցի համար, այլ եւ քննութեան նիւթ դարձնելով այս կամ այն հանրային ու գրական հարցը:

Ք. Պատկանեան անպակաս էր սյդ հաւաքայթներին: Լինելով Ա. Ա. Բիւրեւանի դասակների հոյերէնի դասատուն՝ նա բնականաբար աւելի յաճախ էր այցելում սյդ տունը: Ու Պատկանեան սիրոյ կապերով եւս կապուում է Ա. Ա. Բիւրեւանի ընտանիքին եւ նշանուում նրա դուստր Աննայի հետ:

4.

Աւարտելով Պետերբուրգի Մանկավարժական Ինստիտուտը՝ Ք. Պատկանեան 1857 թ. մեկնում է Թիֆլիս, որպէս ուսուցրականութեան գասատու նոյն քաղաքի օրիսրդաց միջնակարգ Ինստիտուտի։ Հաջիւ մէկ տարի է մնում նա այդ քաղաքում։ Յաջորդ տարին վերադառնում է Պետերբուրգ եւ ամուսնանում իր նշանածի՝ Ա. Աբիմեանի գուտար Աննայի հետ։

Հիմնելով իր ընտանեկան յարկը եւ ապահովելով նիւթական վիճակը՝ Ք. Պատկանեան հանգիստ կերպով նուիրում է իր սիրած պարագմունքներին՝ գիտական եւ ժամանասրի հայագիտական աշխատութեանց, միշտ նորանոր պրպտումներ անելով հոյ լիզուի ու մատենագրութեան մէջ, աւելի ու աւելի խորացնելով իր գիտութիւնը եւ հմտութիւնը այդ մարզում։ Ուսումնասիրում է նաեւ իրաներէն ու արեւելագիտութիւն, առհասարակ։ Նոյն այդ տարիների պրպտումների արդիւնքն է լինում իր գիտական երախտյրիքը՝ Մատենագիտութիւն հոյ գրականութեան, գրած Փրանսերէն լեզուով եւ 1860 թ. լոյս ընծայած Պետերբուրգի Գիտութեանց Ակադեմիոյի Տեղեկարբրի մէջ՝ Catalogue de la littérature arménienne depuis le commencement du IV. siècle jusque vers le milieu du XVII վերնագրով։ Հետեւում են ուրիշ գործեր։

Գլխավորն էւ բանասիրական աշխատութիւնները պահանջում են սակայն ե՛ւ սերիշ տեսակի նպատաւար մթնոլորտ, որ գրեթէ միշտ էլ — լինի մեղհում թէ Ռուսաստանում կամ Եւրոպայում — կապուած է եղել ուսուցչապետական ամբիոնին: Բարերախտարար, այդ հնարաւորութիւնն էւս չուտով տեղեւում է երիտասարդ գիտնականի համար: Այն է՝ 1861 թ. թողնում է իր պաշտօնը Պետերբուրգի Համալսարանի հայերէնի դասախօս Ն. Բերդեւ ու Մկրտիչ Էմինի յանձնարարութեամբ թափուր մնացած պաշտօնը յանձնւում է 28 տարեկան Փերովրէ Պատկանեանին:

Նոյն այդ տարուանից 1861 թ. սկսում է գրական եւ գիտական մի ընդուն գործունէութեան շրջան Ք. Պատկանեանի համար: Գլխուքեանց Ակադեմիայի յանձնարարութեամբ ու միջոցներով նա ըստ է ընծայում մի շարք հայ պատմագիրների սուսերէն գիտական թարգմանութիւնը, օժտած հմուտ ծանօթագրութիւններով ու ներածականներով: Մէկը միւսի յետեւից հրատարակ է հանում հայ լեզուին ու բարբառներին, հայ մատենագրութեան ու պատմութեան նուիրած խորագին ուսումնասիրութիւններ: Լոյս է ընծայում հայերէն բնագիրներ՝ պատմական, աշխարհագրական եւ մատենագրական բովանդակութեամբ:

Դասախօսի ամբիոն գրաւելուց ոչ շատ յամանակ անց, 1863 թ., Ք. Պատկանեան

Պետերբուրգում հրապարակ է հանում ուս-
սերէն լեզուով մի գիտական շարադրութիւն՝
ստանալու համար մագիստրոսի տիտղոս :
Աշխատութեան վերնագիրն է՝ «Փորձ Սասա-
նեան հարստութեան պատմութեան, հայկա-
կան աղբիւրների հիման վրայ» : Ընդամէնը
մէկ տարի յետոյ (1864 թ.), լոյս է ընծա-
յում, դարձեալ ուսերէն լեզուով, իր դուկ-
տորական գիտերապիոնէ՝ «Հետազոտու-
թիւններ հայ լեզուի կաղմութեան մասին»,
որով եւ ձեռք է բերում բուն իսկ պաշտօնա-
տար ուսուցչապետի (Ordinarius) տմբիոն իր
պատկանած Փակուլտետում : Տարուէ տարի
հետեւում են հայագիտական նորանոր աշխա-
տութիւններ : Դրանք դրեթէ ամէնը կրում
են հեղինակի եւ հրատարակչի անուան ու
աղբանուան սկզբնատառերը միայն՝ Ք. Պ. :
Եւ այսպէս, Ք. Պատկանեան իր հմտալից
աշխատութիւնների շնորհիւ ձեռք է բերում
Լեոպոլտի հռչակ : Նրա ուսումնասիրու-
թիւններից մի քանիսը հրատարակում եւ
կամ թարգմանում են Փրանսերէն կամ գեր-
մաներէն, այլ եւ հայերէն մասնաւորապէս
Արզար Յովհաննիսեանի «Փորձ» նշանաւոր
գրական հանդէսի մէջ (Թիֆլիս) :

5.

Ք. Պատկանեան ոչ միայն հմուտ գիտ-
նական էր, այլ եւ ունէր բաւաստեղծական
ձիրք, որ յատուկ էր Պատկանեան Գերդաս-

տանի անդամներէց մօտնց, զլսելն ունենալով Գամառ-Քաթիպան: Քերտօրէ Պատկանեանի զրչի տակից ելած ոտանաւորները, քիչ բացատու թեամբ, արգիւնք են իր զորպատեան ուսանողական տարիների:

Անչուչա, որպէս բանաստեղծական ձիրքի տէր մէկն էր նաեւ, որ նա ըստ արժանւոյն գնահատեց Յարութիւն Ալամդարեանի թողած զրական ժառանգութիւնը եւ մի առանձին հատորով լոյս բնծայեց նրա ձեռագիրն ոտանաւորները՝ «Չախարեբականք» վերնագրի տակ (Պետերբուրգ, 1884 թ.):

Երբ մենք խօսում ենք Ք. Պատկանեանի եկանքի մասին, անտես չպիտի անենք եւ իր ուսուցողական զործունէութեան վստահելը: Անչուչա, մեծ չէ եղած Պետերբուրգի համալսարանի արեւելագիտական Փակուլտետի այն ուսանողների թիւը, որ հայագիտութեան դասընթացքներին են հետեւած Ք. Պատկանեանի մօտ: Դժբախտաբար, մանրամասն տեղեկութիւններ պակսում են մեզ այդ մասին: Այսչափ ասենք այստեղ, որ երկու նշանաւոր հայագէտներ աշակերտած են Պատկանեանին եւ առ իսկ նորա հմտացած այդ մարդում, դառնալով արժանի աշակերտներ իրենց մեծանուն ուսուցչի: Մէկը՝ հայ, միւսը՝ օտարազգի:

Այս վերջինն էր՝ սուս անուանի արեւելագէտ, հռչակաւոր հայագէտ ու վրացագէտ եւ յարեթարանութեան հիմնադիր Նիկ. Մառ, որ եւ յաջորդեց իր ուսուցիչ Ք. Պատ-

կանեանին նրա մահից յետոյ, որպէս ուսուց-
չապէա Պետերբուրգի համալսարանի արեւե-
լադիստական ֆակուլտետի, զբաւելով հայա-
դիտութեան եւ վրացագիտութեան ամբիոնն
այնտեղ: Պատկանեանին է աշակերտած Պե-
տերբուրգի համալսարանում հաւա Ստեփան
Մալխասեան՝ կովկասահայ նշանաւոր հայ-
կարան եւ վաստակաւոր մանկավարժ երկա-
րամեայ դասաւու եւ տեսուչ Թիֆլիսի Ներ-
սիսեան Դպրոցի, կարճ ժամանակ հաւա էջ-
միածնի Գէորգեան Ճեմարանի, այլ եւ հեղի-
նակ հայագիտական մի քանի ուսումնասի-
րութիւնների, հրատարակիչ հայ պատմա-
գիրների, հանրային եւ արդային դործիչ
կովկասում, եւ այլն: Այս կադալիցութեամբ
յիշել կարելի է կողմնակի կերպով եւ անուն-
ները հետեւեալ երեք հայ լեզուարանների
ու հայագէտների:

Սարգիս Սարգսեան, Էլենն Մսերեան եւ
Նիկ. Աղոնց: Առաջին երկուսը յայտնի են
իրենց բարրաւագիտական ուսումնասիրու-
թիւններով, իսկ Նիկ. Աղոնց, որի անունը
հանրածանօթ է արդէն, հեղինակն է մի
չարք հեծադօտութիւնների՝ բանասիրական
եւ մատենադրական բովանդակութեամբ:

Ս. Սարգսեան³ եւ Լ. Մսերեան⁴, որպէս

³ Ս. Սարգսեան, մի շատ խոստմնայի պժ, որ
մետաւ երկաստարգ հասակում, հեղինակն է հայերէն
լեզուով յորինած «Աղուլիսի բարբարը» («Զօկերի լե-
զուն») հմտակից աշխատութեան (Մոսկուա 1882 թ.):

⁴ Լ. Մսերեան հեղինակն է սուսերէն լեզուով
գրած եւ հայ բարբարներին ու մատնաւարապէս հարօնի

բարբառագէտներ, մեծապէս հետևած են օրինակին Ք. Պատկանեանի, որ հիմնադիրն է հայ բարբառագիտութեան: Նիկ. Ադոնց⁵, որ աչակերտած է Նիկ. Մատի, ընթացած տնկախ ուղիով: Նա եւս մնաց հետևորդ ու ներկայացուցիչ նոյն այն գիտական մեծ զպրօցի, որին պատկանում էր Ազանցի ուսուցչի՝ Նիկ. Մատի ուսուցիչ Ք. Պատկանեան — արեւմտեան-եւրոպական բանասիրական գիտութեան, հնդեւրոպական լեզուաբանութեան:

Դարձեալ Քերովրէ Պատկանեան անգամակցած ու իր մերձուոր աշխատակցութիւնն է բերած մի շարք գիտական ընկերութիւններ ի ու մասնակցած է միջազգային արեւելագիտական ժողովներ: Այսպէս, 1861—1868 թ. մասնակցած է Կովկասեան Յանձնախումբին, 1868 թ. ընտրուած է նոյն Յանձնախումբի գլխաւոր տնօրէնի արտաքց կարգի պաշտօնեայ եւ մնացած է այդ պաշտօնում մինչեւ 1874 թ.: 1867—1882 թ. եղած է Հնագիտական Ընկերութեան (Պետերբուրգ)

(Մուշ) բարբառին նուիրած աշխատութեանց: Հիմա իր «Հայ բարբառագիտութիւն» գործը թարգմանութեամբ չ. Գ. Մէնէվիչեանի. Վիեննա 1899:

⁵ Նիկ. Ադոնց (ծն. 23 յունուար 1872), որ իր մահանոցուն կնքեց (27 յունուար 1942) Ռիւսէլում, որ գաղափսոս էր կեանքի վերջին տարիները, իր հայագիտական սկզբնական գործերը հրատարակած է տաւերապէս սուսերէն, իսկ յետոյ՝ հայերէն ու ֆրանսերէն լեզուներով: Իր գլուխ գործոցն է՝ «Հայաստան Յուստինիանոսի դարաշրջանում» կարեւոր աշխատութիւնը՝ գրուած սուսերէն լեզուով: Պետերբուրգ 1908:

տրեւելեան բաժնի քարտուղար, իսկ 1882—1885, տեսուչ նոյն բաժնի: Ապա, 1860 թ. Ք. Պատկանեան ճամբորդած է Եւրոպա, եղած է նաեւ Վիեննա ու Վենետիկ, 1873 թ. բանախօսած է Գերմանիայում եւ Ֆրանսիայում հոյ լեզուի ու Վանսոյ բեւեռագիր արձանագրութեանց մասին, իսկ 1882 թ. քննարկած է Լուվէնի Muséeon գիտական հանդէսի խմբագրական կադմի անդամ: Ասեմք վերջապէս, որ իրեն՝ սրպէս սուս պետութեան պաշտօնեայի՝ արուած է «Իտալական պետական խորհրդական» տիտղոսը:

Իր բեղմնաւոր կեանքը մեծանուն հայագէտը կնքած է համեմատաբար վաղ — մտատորական ոյժերի լրման նոր հասած եւ հազիւ 56 տարին բոլորած, 28 տարիներ անընդհատ Պետերբուրգի համալսարանի արեւելագիտական բաժնի հոյագիտութեան ամբիոնը բոա արժանւոյն ներկայացնելուց յետոյ: Ք. Պատկանեան մեռած է 1889 թ. ապրիլ 2/14ին Պետերբուրգում ու թաղուած է նոյն քաղաքի հայոց գերեզմանատունը:

Ք. Ք. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏԵՐԻՆԵՐԸ ԴՈՐՊԱՏՈՒՄ

6.

Խաչատուր Աբովեանի եւ իւր գալրոյցահրան ընկեր ու մտերիմ բարեկամ Ստեփանոս Նաղարեանի օրինակին հետեւելով՝ բաւական թուով հոյ երխոսասարգներ գիմեցին այնուհետեւ Դորպատ, զերման համալսարա-

նական ուսմանց հետեւելու եւ գերման յեղութիւն հմտանալու ու գերման-եւրոպական մշակոյթով պատարարակուելու փափագով : Այդ պատանիներից ոմանք նախկին աշակերտներ էին Արտվեանի, ուրիշներ՝ Նադարեանի խրախոյան ունէին իրենց հետ, Դորպատ գիմնէով :

Արտվեան, գիտենք, արձանագրուած ուսանող չէ եղած Դորպատում, այլ ապառաւնիդիր (1830—1836 թ.) միայն : Առաջին իսկական հայ ուսանողը Դորպատի համալսարանի եղած է Ս. Նազարեան (1835—1840) : Չհաշուած ապառաւնիդիրները, Դորպատի համալսարանի գերմանական շրջանում, որ տեւեց մինչեւ 1889 թ. եւ ուսողականացաւ այնուհետեւ, այդ համալսարանը յաճախած են թուով մէկ քառասնեակ արձանագրուած, իսկական հայ ուսանողներ ⁶ : Այդ քառասնեակ հայ ուսանողները մի կարեւոր մասով Մոսկուայի Լազարեան ձեւարանի նախկին սաներն են :

Անցեալ դարու յիսնական քուակամները Դորպատի հայ ուսանողութեան սակեղարը համարել կարելի է : 1835—1889 թ. արձանագրուած ու թուով քառասուն հայ ուսանողների կէսը այդ տարիներին է եղած Դորպատի համալսարանում — Գէորգ Աբիմեան, Գարրիէլ Խատիսեան, Գրիգոր Աղափիրեան,

⁶ Հմմտ. մեր վերոյիշեալ աշխատութիւնը (տ. ծան. 1) :

Գէորգ Միրիմանեան, Համբարձում փափա-
ղեան, Մարկիտն եւ Ալեքսանդր Ռոտլինեան
եղբայրներ, Պետրոս Սիմէոնեան, Գէորգ
Դոգոխեան եւ ուրիշներ: Դրանց շարքին էր
պատկանում ահա եւ Քերովնէ Պատկանեան,
նմանապէս նախկին սան Լազարեան ճե-
մարանի:

Ք. Պատկանեան շատ երկար ժամանակ
էի մնում Դորպատում — ոչ իսկ՝ երկու ամ-
բողջ տարի: Ուսումը կիսատ թողած ու սրտի
ցաւով՝ հալիւ Ա) տարին լրացրած պատանին
ստիպուած է լինում հրաժեշտ տալ Դորպա-
տին: Պատճառը հետեւեալն էր: Ք. Պատկա-
նեան, տեսանք փերը, Պետերբուրգի հայոց
եկեղեցու թոշակաւու սան էր Դորպատում,
ինչպէս նաեւ՝ իրեն հետ միասին՝ մի քանի
ուրիշներ: Արդ, մայրաքաղաքի հայոց եկե-
ղեցու վարչութեան փափազն էր, որ իր սա-
ները եւ հետազային հոգեւորական կոչումն
ընդունէին եւ որպէս եկեղեցականներ —
կուսակրօն կամ աշխարհիկ քահանայ վար-
ձահատոյց լինէին Հայոց եկեղեցուն: Այդ
նպատակն էր հետադնդում մանաւանդ Ալա-
թոն Դաթեան Աքիմեանց, որ ամենէն ազ-
դեցիկ անձնաւորութիւնն էր մայրաքաղաքի
հայ չըջանողներում, եւ որ ինքն եւս զստ-
րեւթութիւններ էր անում նոյն ոյգ ուղղու-
թեամբ:

Եւ սակայն, Դորպատի համալսարանի
ուսանողները փափազ չէին յայտնարեւում

Հոգեւոր աստարէզն ընտրելու իրենց համար: Դրանց թւում էր նաեւ Ք. Պատկանեան, որ ոչ իր խառնուածքով եւ ոչ աշխարհացեացքով կոչուած չէր զգում իրեն այդ աստարէզի համար: Արդ՝ Պետերբուրգի հայոց եկեղեցու վարչութիւնը — եւ առաջին հերթին Աղաթոն Աքիմեանց — այն համադրումը կազմելով թէ համալսարանական լրիւ դասընթացքն աւարտող հայ երիտասարդներ աստաղայի աւելի փայլուն հեռանկարներ ունենալով է որ խուսափում են հոգեւորական կոչումից, պատշաճ են համարում, որ իրենց դորպատեան թոշակաուու սաները (սովուկենդիաաներ) կարճ ժամանակ միայն մնան համալսարանում, չաւարտեն իրենց ուսումը, որով եւ, կարծում են, աւելի հակամէտ պիտի լինէին դրանք հոգեւոր կոչումին: Այդպէս խորհելով՝ որոշ ժամանակ յետոյ նրանք զադարեցնում են թոշակաուու ուսանողներին նստաւոր ու հարկադրում նրանց որ ուսումը կիսատ թողնեն ու վերադառնան: Ախալում են, ի հարկէ: Դորպատի ուսանողներից ոչ ոք հոգեւոր աստարէզ չընտրեց, բացի երկուսից, որոնք են՝ Գրիգոր Աղափրեան⁷ եւ Համբարձում փափաղեան⁸:

⁷ Գրիգոր Աղափրեան՝ Աստրախանցի: Նախկին սան Լազարեան ճեմարանի: Դորպատի համալսարան յաճախած 1849—1851 թ.: Հետագային էջմիածնի միարան, եպիսկոպոս:

⁸ Համբարձում փափաղեան՝ Կ. Պոլսեցի: Նախկին սան Լազարեան ճեմարանի: Դորպատի համալսարան յաճախած 1849—1851 թ.: Հետագային հոգեւորական:

A 11
802

Այդ է լինում եւ Քերովրէ Պատկանեանի պա-
րագան: Այդ է լինում նաեւ պատճառ: որ
նա եւս, ինչպէս ուրիշներ, թերի է թողնում
իր համալսարանական ուսումը Դորպատում
ու Պետերբուրգ վերադառնում հարկա-
դրումով:

Այսպէս կամ այնպէս, Դորպատը իր խոր
գրոշմն է թողնում Ք. Պատկանեանի, ինչ-
պէս առհասարակ բոլոր ուսանողների վրայ:
Իր բնականուր գիտական պատրաստութեան
հիմք նա Դորպատում է ստանում, իւրացը-
նելով գերման. գիտութեան մեթոդը եւ աշ-
խատանքի ուղղութիւնը: Հետագայի գիտ-
նական Ք. Պատկանեան չառ բան է պարտա-
կան Դորպատի համալսարանին եւ գերման
գիտական ոգուն:


7.

Քերովրէ Պատկանեանի դորպատեան
ուսման ընթացքին ծանօթանալու համար մէկ
գլխաւոր ու բուն խի աղբիւր կայ մեր տրա-
մադրութեան տակ — դիւանակիւն աղբիւր:
Անդրոյման կարեւոր արժէք ներկայացնում է
իրեն ժամանակակից դորպատեան նախկին

« Ընդ հաւանական չի թւում, որ Ք. Պատկա-
նեան, ինչպէս ուրիշ ոմանք Դորպատից Պետերբուրգ
Քերատարտ վերադարձանէր, մի առ ժամանակ այդ-
տեղի հայոց եկեղեցում — նիւթական նեղութիւնից
զրկուած — տիրացութիւն արած լինի (տ. «Քաղմա-
վէպ» 1891, էջ 141): 1852 թ. սեպտեմբեր ամսին,
ուրեմն դորպատեան տարուան սկիզբն իսկ, պէտք է որ
նա Ստաւրոպոլ մեկնէր, ուր եւ գիտենք, մտաւ տեղ-
ւոյն գիմնադրան ու ստարանց այն, յաջորդ տարին:

ՊԵՏԻ.

2



ուսանող Ալեքսանդր Ռոտինեանի¹⁰ Յիշուղու՝ Քեանց այն հաստուածը¹¹ եւս, որ նախընտրուած է Ք. Պատկանեանին:

Վերջինիս անունով Դորպատի համալսարանի գիւանում պահուած կայ մէկ թղթածրար (Acta) միայն, որ գտնուում է Խորհուրդի եւ Վերատեսչութեան գործերում¹²:

Թղթածրարի վրայ իրրեւ Ք. Պատկանեանի արձանագրման թիւ (Immatrikulationsnummer) նշանակուած է՝ 5695. այսինքն, համալսարանի հիմնադրման եւ կամ, աւելի ճիշդը, վերականգնութեան թուականից (1802 թ.) ոկուած՝ Ք. Պատկանեան ժամանակա-

¹⁰ Ալեքսանդր Ռոտինեան՝ Թիֆլիսեցի: Նախկին սան Լազարեան ճեմարանի: Դորպատի համալսարան յաճախած 1852—1856 թ. եւ աւարտած այն: Գիւղանաւ: Պատկան պաշտօնեաց: Հանրային գործիչ:

¹¹ «Արձագանք» (Թիֆլիս) 1892, թիւ 110 (սեպտ. 23): — Դորպատեան Յուշեր ունի գրած նաեւ բժ. Լեւոն Տիգրանեան (Ներեանցի), գործնաւ նախկին սան նոյն համալսարանի: Եւ սակայն, այս վերջինիս Յուշերը արժէք ներկայացնում են աւելի՝ իր ուսանողութեան շրջանի (1866 թ., ապա՝ 1870—1875 թ. Դորպատում) մասին, լինելով տկանատեսի գրածներ: Ք. Պատկանեանին նուիրած հաստուածը («Լուսնայ» Հանդէս, Թիֆլիս, 1903, թիւ 5, սեպտ.—հոկտ. էջ 32—33) նորութիւն չի պարունակում իր մէջ եւ բոսէսթեան վերադարձութիւն է Ալ. Ռոտինեանի հաւորած տեղեկութեանց:

¹² Դորպատի համալսարանի լրիւ գտնութեան աւարտած նախկին ուսանողների անունով — Ս. Լազարեան, Գ. Դոպոխեան եւն — երկուսիւն թղթածրար կայ պահուած համալսարանի գիւանում. մէկը Խորհուրդի եւ Վերատեսչութեան, միւսը՝ Պատկանեանի Գործերում, իսկ թերաւարտների անունով՝ մէկական թղթածրար միայն, Խորհուրդի եւ Վերատեսչութեան գործերում:

զրախան կարգով 5625րդն է եղած (խիլ դոր-
պատեան հոյ ուսանողներէ շարքում, առ-
հասարակ, 10րդը), որ արձանագրուած է
խիլական ուսանող: Թղթածրարը կամ
«Գործը» բացուած է արձանագրման օրն իսկ՝
19 Յունուարի 1851 թ.: Այս կառուցութեան
մէջ տեսնք, որ իր համաքաղաքացի ու ըն-
կեր Պետրոս Սիմէոնեանց¹³ եւս նշոյն այդ
օրն է մտած Դորպատի համալսարան, որպէս
արձանագրման թիւ ստանալով՝ 5694: Եր-
կուքն եւս՝ նախկին սաներ Լադարեան Ճե-
մարանի, այնպէս ժխտին եկած Դորպատ:

Ք. Պատկանեանի Թղթածրարը կամ
«Գործը» պարունակում է թուով ոչ տեղի
քան եօթն զրութիւն: Պատճառն այն է նախ,
որ նա թերի է թողած իր ուսումը Դորպա-
տում, երկրորդ՝ Համալսարանը թողնելիս
զիւանից յետ է վերցրած իր փաստաթղթերի
մէկ մասը: Դորպատի համալսարանից նա
դուրս է եկած 1852 թ. Սեպտ. 9ին, թէեւ
իր թղթածրարը պաշտօնապէս փակուած է
աւելի ուշ, 3 Յուլ. 1853 թ.:

Բացի իր Թղթածրարի մէջ եղած նիւթե-
րից, Ք. Պատկանեանի մասին մի քանի ան-
հրաժեշտ տուեալներ գտնում ենք մենք եւ
Ուսանողական արձանագրմանց Մայր Մա-

¹³ Պետրոս Սիմէոնեան՝ Նոր-Նախիջևանցի:
Նախկին սան Լադարեան Ճեմարանի: Դորպատի հա-
մալսարան յաճախած 1851—1853 թ.: Հետագային
յոյանի զարոյցական գործիչ եւ խմբագիր «Մեզու Հա-
յաստանի» թերթի: Ղեկավար ղէմք պահպանողական
ուղղութեան:

տեանի (Album Academicum) մէջ: Ստորեւ նախ ցատաջ կը բերենք վերջինիս համադրատառխան հատուածը, ապա թէ կը գիմենք թղթածրարի նիւթերին: Այտուի իսկ ասենք սակայն, որ Ք. Պատկանեան ինչպէս նաեւ իրանից առաջ ու իրանից յետոյ մի զգալի թիւ հոյ ուսանողների մօտէ է Դորպատի Համալսարանի Պետատնտեսագիտական բաժինը եւ հետեւել այդ բաժնի (Cameralia) ուսմանց: Պետատնտեսական գիտութեանց մէջ էր մտնում նաեւ գիւղատնտեսութիւնը: Հոյ ուսանողներից ոմանք հետեւած են մատնաւորապէս այդ վերջին՝ գիւղատնտեսական գիտութիւններին: Պետատնտեսական գիտութիւններին հետեւող ուսանողները նախադատարտաւում էին առաւելապէս պետական-հանրային ծառայութեան մէջ մտնելու՝ որպէս մասնագէտներ:

Անքերի ցանկը Դորպատի Համալսարանի ուսանողների, առաջին օրերից իսկ, պարունակում է, 1802 թ. մինչեւ 1889 թ., չուրջ մէկ եւ կէս տասնեակ հազար անուններ, զբանց թւում նաեւ՝ քառասուն հոյ ուսանողների անուններ:

Ամէն մի ուսանողի մօտին գրի են առնւած, արձանագրման օրն իսկ, մի քանի անհրաժեշտ տուեալներ՝ որպէս պատասխան ընդհանուր եւ միատեսակ հիմնական հարցումների:

Ձեռագիրը Մայր Մատենի մէջ (հա-

տոր II) Քերտփէ Պատկանեանի մասին զրա-
նում ենք հետեւեալ տուեալները .

1. Արձանագրման թիւը — 5695 :

2. Ուսանողի անունը — Քերտփէ Պատ-
կանեանց , Լազարեան Ճեմարանից :

3. Ծննդեան տարին եւ օրը — 4 մայիսի
1833 : Հայ-Լուսաւորչական :

4. Ծննդեան վայրը — (Նոր-Նախի-
ջեան :

5. Ծնողների կամ խնամակալների ա-
նունները , գիւրքը եւ յայտարար նշանը —
Պետրոս քահանայ : — Աննա , ծնեալ Ալամ-
զարեանց :

6. Ծնողների կամ խնամակալների բնա-
կախըրը — Սաւարոյսլ :

7. Ո՞ր ֆակուլտետում է արձանագրուած
— Պետատնտեսագիտական (Cameralia) :

8. Արձանագրման (Immatriculation)
թուականը — 19 յունուարի 1851 :

9. Ե՞րբ է թողած համալսարանը —
1852 թ. սեպտ . 9 : Ընդհանուր վկայաթուղթ՝
3 յուլիսի 1853, թիւ 1200 :

10. Զնջումն անուան (ուսանողների ցան-
կից) , պատիժ կամ հեռացում : — Պարտալ է
թողուած պատասխանի տեղը :

11. Ե՞րբ է վերընդունուած համալսա-
րան : — Պարտալ է թողուած պատասխանի
տեղը ¹⁴ :

¹⁴ Այդ նշանակում է՝ Ք. Պատկանեան ուսանող
կրած ժամանակ որեւէ պատժի չէ՛ ենթարկուած , ա-
նունը չէ՛ ջնջուած ուսանողական ցանկից եւ չէ՛ հեռա-
ցուած կամ վերընդունուած համալսարան :

Այժմ առաջ բերենք Ք. Պատկանեանի թղթածրարի ցանկը: Այդ թղթածրարի սկիզբը առուած է. «Բովանդակութեան ցանկ՝ Քերտվրէ Պատկանեանցին վերարկւորեալ դորձերի»: Տակը կարգում ենք հետեւեալ մակադրութիւնը. «վերոյիշեալ փառաթղթերը ստացայ Գ սեպտ. 1852»: Ստորագրութիւն՝ Քերտվրէ Պատկանեանց ¹⁵:

Թղթածրարի մէջ սկզբնապէս եղած է համալսարանի թոյնելիս Պատկանեանի յետ վերցրած սոյլ փառաթղթերը, ինչպէս տեսնում ենք Բովանդակութեան Ցանկից եւ որոնց մասին համալսարանի վարչութեան կողմից առուած է, ըստ սոփոքականին, «Վկայականներ, որ ներկայացուել են ուսանողներէ չարքը ընդունուելու առթիւ», հետեւեալները եղած են.

1. Վկայական՝ տրուած Աստրախանի Կոնսիստորիայի ¹⁶ կողմից ¹⁷, 6 յունուարի 1842, թիւ 18:

2. Վկայական՝ տրուած Լազարեան ծեմարանի Հոգարարձուի կողմից, ²² յուլիսի 1849, թիւ 171:

¹⁵ Թղթածրարի մէջ ամէն տեղ նշանակուած ենք զանաւոր Cherubim Patkanianz կամ Patcanianz տնօրէններ: Ինքն էւս ստորագրում է՝ Cherubim Patcanianz:

¹⁶ «Կոնսիստորիա» էին կոչում ցարական կառավարութեան որով Հայոց թեմական հոգեւոր առեւտները: Աստրախանը կազմում էր Ռուսաստանի Հայոց թեմերից մէկը եւ ունէր իր կոնսիստորիան կամ հոգեւոր առեւտը:

¹⁷ Բայանդուկէն՝ ձեռնդեան վկայական Ք. Պատկանեանի:

3. Թոյլատուութեան զիր Պատկանեան քա-
հանայի ¹⁸ :

4. Բարեյոսութեան վկայական՝ տրուած
Դորոպատի ստորիկանապետի կողմից ¹⁹,
13 յունուարի 1851, Թիւ 243 :

5. Վկայական՝ տրուած Լազարեան ձե-
մարանի վերատեսչի ²⁰ կողմից, 21 մարտի
1850, Թիւ 176 :

Այլ փաստաթղթերից զատ, որ սկզբնա-
պէս եղած են Ք. Պատկանեանի Թղթածրա-
րում եւ ասպա յետ աւնում, «Բովանդակու-
թեան Յանկ»ի մէջ նշանակուած է եւ մի
վեցերորդ գրութիւն, որ մնում է Թղթա-
ծրարում, քանի որ Համալսարանի ներքին
գործերին է վերաբերում. այն է՝ «Արձանա-
դրութիւն հարցաքննման (Քերտվւթ Պատկա-
նեանի), նրան ուսանողների շարքն ընդ ու-
նելու համար» (տե՛ս վարր) :

Թղթածրարի մէջ պահուում են, բացի
վերոյիշեալից, եւս հինգ գրութիւններ :

¹⁸ Ամէն մի նորեկ ուսանող պարտաւոր էր ներ-
կայացնել նաեւ յատուկ Թոյլատուութեան զիր իր ծնող-
ների (եւ կամ խնամակալների) կողմից առ այն, թէ
վերջիններս համաձայն են որ նա մտնի համալսարան :

¹⁹ Ամէն մի նորեկ ուսանող պարտաւոր էր գոր-
ծնալ՝ ստորիկանութիւնից եւս ստանալ ու համալսա-
րանի վարչութեան ներկայացնել քաղաքական բարե-
յոսութեան վկայական, որից երեւոր որ նա հակա-
կոստաւորական բնթացքի մէջ չէ եղած :

²⁰ Անշուշտ՝ ուսման վկայական :

Բուն իսկ արձանագրուած, իսկական ուսանող ընդունուելու համար՝ Համալսարանի ներկայացող ամէն մի նորեկ պարտաւոր էր որոշ առարկաներից քննութիւն տալ պրոֆեսորներինց թաղկացած Քննիչ Յանձնաժողովի մօտ։ Նոյն այդ կարգին ենթարկուած է, ի հարկէ, նաեւ Քերտվրէ Պատկանեան։

Վերջինիս քննութեան առթիւ կազմուած արձանագրութեան մէջ, որ պահուած է Պատկանեանի Թղթածրարում, տաւած է թէ՛ Պետաւնաւստական գիտութիւններ (Cameralwissenschaften) իրեն համար որպէս մասնաճիւղ ընտրած ու քննութեան ենթարկուած Քերտվրէ Պատկանեան ցոյց է տաւած հետեւեալ յատաճագիծութիւնը.

1. Յունարէնից չէ քննուած ²¹։
2. Լատիներէն. բանաւոր՝ լատ, գրաւոր՝ բաւարար, ընդհանուր՝ լատ. (II)։
3. Մաթեմատիկ. բանաւոր՝ բաւարար, գրաւոր՝ անբաւարար, ընդհանուր՝ բաւարար (III)։
4. Պատմութիւն՝ լատ, Աշխարհագրութիւն՝ չատ լատ, ընդհանուր՝ լատ. (II)։

²¹ Յունարէնից քննութիւն տալ պարտաւոր էին համալսարանի պատմաբանասիրական եւ աստուածաբանական ֆակուլտետները մտնող ուսանողները միայն։ Ս. Նաղարեան, օրինակ, քննուել է նաեւ յունարէնից։ Եւստիքիոս լեզուի քննութիւնը պարտադիր եղած է միւս ֆակուլտետները մտնողների համար եւս, անխորհրդ։

5. Ռուսերէն. բանասեր՝ չափ լաւ, գրաւոր՝ չափ լաւ, ընդհանուր՝ չափ լաւ (I) :
6. Գերմաներէն չարագրութիւն՝ լաւ, ընդհանուր՝ լաւ (II) :

Արձանագրութեան տակ կարգում ենք քննող պրոֆեսորներին ստորագրութիւնները — Հաֆներ (Haffner), Քրուզէ (Kruse), Ռոզերբը (Rosberg), Հէն (Hehn), Մինդինգ (Minding) եւ այլն։ Աւելի վարը մտկադրուած է. «Քննիչ Կոմիտէի վկայագիր, 17 յունուարի 1851, թիւ 1485 (Խորհուրդի՞ ?) թիւ 43» :

«Վարչական գրանցում Ք. Պատկանեանի մասին» էջի վրայ ընդամէնը երեք տող ենք գտնում արձանագրուած, ուր տնտուած է. «Դիտողութիւններ ու նշումներ։ Դորպատի Համալսարանի Արձանագրմանց Մայր Մատենում (Album Stud. Acad. Dorp.) նշանակուած է որպէս Պետաւանտիտական գիտութիւնների ուսանող. 19 յունուարի 1851, թիւ 5695 :

Ինչպէս ամէն մի ուսանող, այդպէս եւ Ք. Պատկանեանն ունեցել է իր «ուսանողական գատախօսութեանց թերթը» (Anmeldebogen), որ պահուած է Թղթածրարում։ Այդ թերթի մէջ, ուր նշանակուած են իր տնուն—աղգանունը, որտեղացի լինելը²², արձանագրման

²² Այդտեղ, Ք. Պատկանեանի «ուսանողական գատախօսութեանց թերթի» մէջ, նրա մասին ասուած է՝ «Անդրկովկասցի»։ Ակներեւարար գրչի սխալ, չփութութեան արդիւնք միայն։ Համալսարանի վարչութեան գրանցող պաշտօնեան չփութել է, երեւում է,

թիւը, և յաճախած ֆակուլտետը, մ'ի առ մ'ի արձանագրուած է նաեւ, թէ ո՛ր կիսամեակին ի՛նչ առարկաներ է լսած նա, ո՛ր պրոֆեսորի մօտ, ու ի՛նչ յատաճաղիմութիւն է ցոյց տուած :

Այդ տեղից տեսնում ենք՝ Դորպատի Համալսարանի Պետտանտեռական մասնաճիւղին իրրեւ 5695րդ արձանագրուած ուսանող Քերպրէ Պատկանեան, որ Համալսարան է մտած 1851 թ. յունուար 19ին, դատախօսութեանց գրուած է եղել ընդամենը չորս կիսամեակ, այն է՝ 1851 թ. առաջին և երկրորդ ու 1852 թ. նմանապէս առաջին և երկրորդ կիսամեակներին :

1851 թ. առաջին կիսամեակին Պատկանեան լսած է հետեւեալ դատախօսութիւնները : 1. Տրամարանութիւն՝ Շարիւմպելի (Strümpel) մօտ : 2. Ռուս. պատմութիւն՝ Քրուզէի ²³ մօտ : 3. Ընդհանուր Աշխարհագրութիւն՝ Բլումի ²³ (Blum) մօտ : 4. Վերձանում ուսւոյ քանտատեղծներին՝ Ռոպրերդի ²³ մօտ :

1851 թ. երկրորդ կիսամեակին լսած է . 1. Ռուս. պատմութիւն (Քրուզէ) : 2. Հան-

Հարաւային Ռուստատանի Նոր-Նախիջևան քաղաքը Հին-Նախիջևանի հետ, որ Անդրկովկասում է գտնուում : Ուղիղ ձեւով է արձանագրուած — Նոր-Նախիջևան — Ք. Պատկանեանի ծննդավայրի անունը Album Academicum-ի մէջ :

²³ Քրուզէ, Քլում, Ռոպրերդ և Ֆրիդլենդեր եղած են ուսուցիչները նաեւ Ս. Նադարեանի : Ֆրիդլենդեր գտն է տուած Խաչատուր Աբովեանին և ո, որ իր գորդատեան Յիշատակարանի մէջ ասանձին երախտագրութեամբ է յիշում նրա անունը :

բաղխաութիւն անտեսագիտութեան՝ Զրիզ-
լենդերի (Friedländer) մօտ²³ : 3. Վերծա-
նում ուսու բանաստեղծների (Ռոպրերզ) :
4. Զրիզի, II. մաս (Քեմց՝ Kämtz) :

1852 թ. տալիս կիսամեակին Ք. Պատ-
կանեան լսած է հետեւեալ աւարկաները .

1. Քաղաքատնտեսութիւն (Զրիզլեն-
դեր) : 2. Ռուս. լեզու (Ռոպրերզ) : 3. Զրիզի
I. մաս (Քեմց) : 4. Անտառագիտութիւն
(Փուցոլդ՝ Putzold) :

1852 թ. երկրորդ սեմեստրին լսած է .
1. Արտեսարանութիւն (Technologie) Փու-
ցոլդի մօտ : 2. Ռուս. գրական-պատմու-
թիւն (Ռոպրերզ) : 3. Քաղաքատնտեսութիւն
(Զրիզլենդեր) : 4. Ընդհ. պատմութիւն
(Քրուզէ) :

1851 թ. տալիս կիսամեակին Շարիւմ-
պէլ, որի մօտ Տրամարանութիւն է լսած
Պատկանեան, վերջինիս ուսանողական դա-
ռախօսութեանց թերթի համապատասխան
սիւնակի մէջ մակադրած է . «Շատ ջանաւի-
րութեամբ յաճախած» : Միւս դասախօսները
մակադրած են՝ «Ջանաւիրութեամբ յաճա-
խած» եւ կամ պարզապէս՝ «յաճախած»,
«լսած» :

10.

Ք. Պատկանեանի Թղթածրարի յաջորդ
գիտատաթույթը մի սուսերէն խնդրադիր է,
որ ուսանողի հայրը՝ «Սաւրօղի եւ կու-
րանի հայ եկեղեցիների գործակալ քահա-

նայ» Տէր-Պետրոս Պատկանեան ներկայացրած է Համալսարանի սեկտոր Պրոֆ. Հաֆներին : Խնդրագիրը, Ստաւրոպոլ Կաթիլատեան, յունիս 1853 թուակիր, ստորագրուած է Գործակալ քահանայ Տ. Պետրոս Պատկանեանցի կողմից եւ ունի հետեւեալ բովանդակութիւնը :

«Անցեալ 1852 թուականին ես խնդրով դիմեցի Ձերդ Գերադանցութեան՝ Գորդատի Համալսարանի ուսանողների ցանկից ընտանեկան պատճառներով հանելու իմ օրդի Բերովրէ Պատկանեանցին :

Արդ, ընդ միւս յղելով որդուս ուսանողական դասախօսութեանց թերթը (Anneldebogen), ամենախոնարհաբար խնդրում եմ Ձերդ Գերադանցութեան՝ տալ նրան մի վկայական իր հետանալու ու Ձերդ Գերադանցութեան վստահուած Համալսարանում իր ուսման տեսողութեան ընթացքում ցոյց տուած յառաջագիմութեան մասին եւ ուղարկել ինձ այն, որով եւ վիճակի կը լինի նա՝ մտնելու քաղաքացիական ծառայութեան մէջ : Վստան դի, առանց պատկան վկայականի նա կարող չէ ծառայութեան մէջ ընդունուիլ» :

Նոյն 1853 թ. յուլիս 3 թուակիր մի վկայագիր է թղթածրարի յաջորդ փոստութեան, թիւ 1200 դրութիւն Գորդատի Համալսարանի Խորհուրդի, տրուած «Գորդատի կայսերական Համալսարանի նախկին ուսանող Պետատնաւսադիտութեան Բերովրէ

Պատկանեանցի մասին» առ այն, թէ նա, Քերտօրէ Պատկանեան²⁴, քահանայի սրբի, «1851 թ. ստաջին կիսամեակի սկզբից մինչև 1852 թ. սեպտ. 9, որ օրը նա սեփական կամքով թողել է համալսարանս, գտնուել է ուսանողների շարքի մէջ»։ Շարունակութեան մէջ ասուած է՝ թէ «համաձայն իր ուսանողական դասախօսութեանց թերթի, ինչ դասախօսութիւններ է. յաճախած, «Ջանասիրութեամբ», նախկին ուսանող Ք. Պատկանեան։ Ու հետևեւծ է թուումք այն ստաջիաների, որ ստաջ բերինք վերը, առնելով յիշեալի բուն իսկ «ուսանողական դասախօսութեանց թերթ»ից։

Համալսարանի ասւած վկայապրի շարունակութեան մէջ ասուած է. «Միւսնոյն ժամանակ դիտուած է բոտ կանոնի, որ պարտն Քերտօրէ Պատկանեանց աւարտական քննութիւն (Gradualexamen) չէ ասուած։ Այդ պատճառով եւ նրան չեն կարող վերադասել այն իրաւունքները, որ (Կայսեր կողմից) ամենաողորմածարար շնորհուած են (Համալսարանիս) դասընթացքն աւարտած ու յաջող քննութեամբ համալսարանական ատտիճանի արժանացած անձերին՝ քաղաքացիական ծառայութեան մէջ մտնելիս։ Եւ սակայն, քանի որ տեղւոյս համալսարանում եղած ժամանակ իր վարքն ու բարքը, համաձայն համալսարանիս դատարանի բարույց

²⁴ Այստեղ եւս Ք. Պատկանեան սխալմամբ «Անդր-կովկասցի» է նշանակուած։ Հմմտ. վերը՝ ծան. 22։

մատեանի տուեալներէ, լաւ եղած է, ուստի
 և վերադաճուած է նրան իրաւունք՝ քաղա-
 քացիական ծառայութեան մէջ մանկիւն պաշ-
 տօնեաների երկրորդ դասի մէջ հաշուե-
 լաւ»։ (Պետական Օրէնքների ժողովածու
 հրատար. 1842, հատոր III, Կանոնադրու-
 թիւն կառավարութեան կողմից ծառայու-
 թեան կոչելու մասին՝ յօդուած 590)։

Վկայադրի տակ մակադրուած է .

«Պատրաստեց՝ (Ստորագրութիւն) Տո-
 բիէն (Tobien)։

Ք. Պատկանեանի թղթածրարի յաջորդ
 ու վերջին փաստաթուղթը, գրուած ուսե-
 րէն լեզուով, ունի միեւնոյն բաժանդակու-
 թիւնը ու կրում է միեւնոյն թուականը
 (3 յուլիս 1853) և միեւնոյն համարը (1200),
 ինչ որ՝ նախորդը (գերմաներէն լեզուով)։
 Ամբողջ վկայաթուղթը բաղկացած է միածալ
 (in folio) երկթերթից (չորս էջ), որի ա-
 ռաջին և երկրորդ էջերում գերմաներէն
 տեքստն է գրուած, իսկ երրորդ և չորրորդ
 էջերում՝ ռուսերէնը։ Միայն գերմաներէն
 բնագիրն է կրում ստորագրութիւնը (To-
 bien)։

Այդպիսի վկայագիր, ինչպէս վերինն է,
 արւում էր ամէն մի ուսանողի, որ թողնում
 էր համարաբանը. անկախ այն բանից, թէ
 նա աւարտական քննութեանց պիտի ներ-
 կացանա՞ր թէ ոչ։ Մի պարզ վկայաթուղթ
 ուրեմն այն մասին, թէ տուեալ ուսանողը
 ո՞ր կիսամեակին ի՞նչ ստարկաներ է լսած

և՛ ի՛նչ կանոնաւորութեամբ: Քերովըէ Պատկանեան ևւ, որ, ինչպէս տեսանք, չէ տւարտած Դորպատի Համալսարանը, վերջինիս վարչութիւնից ստացած է մի այդպիսի վկայութուղթ:

11.

Տեսնում ենք սերեմն՝ Քերովըէ Պատկանեան Դորպատի Համալսարանի ուսանողների շարքն է մանում 1851 թ. յունւար ամսին, այսինքն՝ ոչ իսկ 18 տարին լրացած: Համալսարանը թոյնում է նա 1852 թ. սեպտեմբեր ամսին, ոչ իսկ 19½ տարին բոլորած: Թէև, իր «ուսանողական զաստիօսութեանց թերթ»ին նայելով, նա իր շորրով կիսամեակին ևւ ուսանողների շարքում եղած է, ևւ սակայն՝ կիսամեակը (շորրբով) գեւ նոր սկսած, թոյնում է գտտախօսութիւնները ևւ համալսարանը աւ հասարակ ու Պետերբուրգ վերադառնում:

Դարձեալ, Ք. Պատկանեանի «ուսանողական գտտախօսութեանց թերթ»ից տեսանք մենք, — թէ ի՛նչ գտտախօսութիւններ է լրած նա ևւ ի՛նչ գիտութիւնների հետեւած — Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Դրահանութիւն, Քաղաքաւնտեսութիւն, Տրամաբանութիւն ևւ այլն: Այսինքն՝ գիտաւորարար սղեկան կամ հումանիտար գիտութիւններ: Ուրիշ խօսքով՝ քիչ բացառութեամբ՝ զրեթէ նոյն այն գիտութիւնները, որ այն ժամանակները աւանդում էին Դորպատի

Համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետում ու որոնք հետազային եւս առան-
դուել են սոհասարակ գերման համալսարան-
ների փիլիսոփայական ֆակուլտետի պատմա-
բանասիրական ենթարաժնում։ Ա. Նագա-
րեան, օրինակ, լինելով 1835—1840 թ. Դոր-
պատի Համալսարանի փիլիսոփայական ֆա-
կուլտետի պատմա-բանասիրական ենթա-
րաժնի ուսանող, հետեւած է առաւելագէտ
նայն այն գիտութիւններին, ինչ որ իրենից
16—18 տարիներ յետոյ՝ նայն համալսարանի
փիլիսոփայական ֆակուլտետի արհեստա-
գիտական-սնտեսական ենթարաժնի ուսանող
Բ. Պատկանեան (Էւ ուրիշներ)։

Նկատենք այստեղ, որ մինչեւ 1850 թ.
Դորպատի Համալսարանի փիլիսոփայական
ֆակուլտետը ունէր հետեւեալ չորս ենթա-
րաժնիները. 1. փիլիսոփայական եւ մաթե-
մատ. գիտութեանց, 2. բնագիտական,
3. բանասիրական (ֆիլոլոգիական)–պատ-
մական, 4. արհեստագիտական (տեխնոլո-
գիական)–սնտեսական գիտութեանց ենթա-
րաժնիներ։

1850 թ. փիլիսոփայական ֆակուլտետը
բաժանուել է երկու ինքնուրոյն ֆակուլտետ-
ների. I. Պատմա-բանասիրական եւ II. Ֆի-
զիկո-մաթեմատ. ֆակուլտետներ։ Իր հեր-
թին՝ պատմա-բանասիրական ֆակուլտետը
ունեցել է հետեւեալ երկու ենթարաժնի-
ները. 1. փիլիսոփայական–մաթեմատ. եւ
2. բանասիրական–պատմական, իսկ ֆիզ.–

մաթեմ. ֆակուլտետը՝ 1. բնական գիտությունների և 2. արհեստագիտական (տեխնոլոգ.) — տնտեսագիտական ենթարամբին : Այս վերջին՝ Cameralia, այսինքն Պետական-տնտեսագիտական ենթարամբին և յաճախած ահա Ք. Պատկանեան և մի շարք ուրիշ հայ ուսանողներ : Այդ ենթարամբինը — Cameralia — երբեմնապէս, մինչեւ իսկ պաշտօնական գրութիւններէ մէջ, յիշատակուած է որպէս մի ինքնուրոյն ֆակուլտետ :

Այսպէս կամ այնպէս, Ք. Պատկանեան Դորպատի համալսարանում հետեւում է այն հիմնական գիտութիւններին, որ յետոյ եւս շարունակում են մնալ նրա համար գիտական հետաքրքրութեան գլխաւոր առարկաներ — պոստմութիւն, գրականութիւն, լեզու : Ք. Պատկանեան իր գլխատական առարկէի սկիզբը այսպիսով Դորպատում է գրել և մանաւանդ այնտեղ է իւրացնում գերման գիտականութեան ոգին ու մեթոդը :

Մի հարց մնում է սակայն դեռ չպարզուած : Ք. Պատկանեան գիտնական աշխարհին ծանօթ է որպէս հայագէտ, բայց նաև՝ արեւելագէտ, իրաւագէտ : Արդ, որտեղ է նա մասնագիտօրէն ուսել այդ գիտութիւնները և ո՞ւմ մօտ :

Դորպատի համալսարանում, այդ գիտենք մենք, չեն աւանդուել արեւելեան լեզուներ. իսկ հայերէնի ուսուցման մասին այնտեղ՝ իսոք լինել չէր կարող, ի հարկէ : Արեւելեան լեզուներից միայն երբայեցիքէն

է աւանդուել այնտեղ, այն եւս՝ աստուածաբանական Փակուլտետում: Ք. Պատկանեանի «ուսանողական» գտաւիտութեանց թերթի մէջ եւս, տեսանք, որ եւ է արեւելեան լեզուի յիշատակութեան հետքն անգամ չկայ: Եւ չէր կարող լինել, քանի որ, ասացինք, համալսարանի ծրագրում տեղ չէին դրաւում արեւելեան լեզուները: Պարագան նոյնն է եղած նաեւ, Ք. Պատկանեանից առաջ, նոյն համալսարանի ուսանող եւ հետագային «արեւելեան լեզուաց վարդապետ» (գովարտ) Ս. Նազարեանի համար:

Հարց է, ասում ենք, սրտեղ, երբ եւ ում մօտ է մասնագիտօրէն սովորել արեւելեան լեզուները Ք. Պատկանեան:

Դորպատ թողնելուց (1852 թ.) եւ այնուհետեւ մէկ տարի Ստաւրոպոլի գիմնադիան յաճախելուց ու աւարտելուց յետոյ, նա, տեսանք, 1853—1857 թ. յաճախել է Պետերբուրգի Մանկավարժական բարձրագոյն Ինստիտուտի սլաւոնագիտական բաժինը եւ յաջողութեամբ աւարտել այն:

Արեւելեան լեզուներ այնտեղ չէին սովանդում, ի հարկէ: Ապա, 1857/1858 ուստարում նա անց է կացրել Թիֆլիսում որպէս ուսուցիչ եւ յետոյ կրկին Պետերբուրգ մեկնել 1858ին: 1860ին լոյս է տեսնել Ք. Պատկանեանի գիտական երախտյրիքը՝ նուիրում հոյ գրականութեան մասնագիտութեան: Նոյն սոց թուականին նա Եւրոպա է ճամբարդել. իսկ յաջորդ տարին արդէն,

1861 թ., գրաւել է Ռուսիոյ մայրաքաղաքի համալսարանում հայագիտութեան ամբիոնը:

1858 թ.ից յետոյ, երբ Ք. Պատկանեան վերջնապէս Պետերբուրգ հաստատուեցաւ եւ իր բնասնեկան յարկը հիմնեց ու նիւթական ապահով վիճակ ունեցաւ, նոյն այդ ժամանակից սկսած, տեսանք, նա ինքզինքը զիտութեանց նուիրեց եւ աւելի ու աւելի հմտացաւ նրանցում: Ահա այդ տարիներին է, 1858—1861 թ., որ Ք. Պատկանեան ուսած պիտի լինի նաեւ արեւելագիտութիւն: Հոյերէն նա բաւականաչափ ուսել էր Լազարեան ձեմարանում ու գիւրաւ ի վիճակի էր ինքնուրոյն կերպով, անկախաբար խորանալու հոյ լեզուի եւ բանասիրութեան մէջ:

Պարսկացի արդեօք նոյնն է եղած նաեւ արեւելագիտութեան ու մասնաւորապէս իրանագիտութեան վերաբերմամբ, թէ ունեցած է նա ուսուցիչ-առաջնորդներ այդ մօրցում, — այդ մասին մեզ պակասում են տեղեկութիւններ: Արդեօք այդ տարիները եւ կամ աւելի առաջ Ք. Պատկանեան չէ՞ յաճախած Պետերբուրգի համալսարանի արեւելագիտական ֆակուլտետը, ուր յետոյ նա ինքն արդէն ամբիոն պիտի զբաւէր, — ոչինչ չգիտենք այդ մասին:

Բայց պարսկաների տակ, իրստ հետաքրքրական են Պատկանեանի կեանքի այդ տարիները եւ արժանի՝ մասնաւոր հետազոտութեան: Բաղձալի է որ պրպտութիւններ կատարուին Պետերբուրգի Մանկավարժական Ին-

տախտուտ եւ մանաւանդ նոյն քաղաքի համալսարանի գիւաններում, Ք. Պատկանեանի պետերբուրգեան տարիներին աւելի մօտուց ծանօթանալու համար: Անշուշտ, մեծ հետաքրքրութիւն պիտի ներկայացնէին հայազտի անհատական գիւանն ու նստակներն եւս, եթէ երբեք պահուած են նրանք:

12.

Քերտիրէ Պատկանեանի օրով, 1851—1852 թուականներին, Գորպատի Համայնարանը իր յարկի տակ հաշոււմ էր ոչ պակաս քան 13 հոյ ուսանող: Նրանց մէջ ստեղծուած էր ընկերական սերտ կապ, մտերմական ջերմ մթնոլորտ:

Այդ պատանիները կազմում էին, քով քովի եկած, մի աւստի ազգային կենդանի համայնք, հոգեւոր փոքրիկ Հայաստան՝ հեռաւոր Հիւսիսի այդ նշանաւոր քաղաքում:

Նրանցից ոմանք արդէն իսկ կապուած էին իրար հետ ընկերական կապերով դեռ Լազարեան ձեմարանից, սրի յարկի տակ նրանք միասնարար կրթութիւն էին ստացած: Գորպատի հոյ ուսանողները, բոլորն էլ վառ-ժոռուն երիտասարդներ, գրեթէ պատանիներ, տողորում էին գաղափարական ձգտումներով, ապրում էին հայրենիքի ու ազգի սիրով, տարում էին հայրենասիրական իղկալներով: Ընկերական կեանքը, մտքերի եւ գաղափարների շփումը ջերմ մթնոլորտ էին ստեղծել նրանց շարքերում: Փամանակի

սպին, գերման շրջապատը, նոր իղէալները
 սպեւորութեան մի-մի ազրիւր էին նրանց
 սոմենի համար: Ու այդ պատանիները Գոր-
 պատ էին եկած՝ գերման զխառնեան ու
 Եւրոպական մշակայի գէնքով զինուելու, մի
 «նոր աւադանի մէջ փերամկրտուելու» եւ,
 որպէս այդպիսիք, այդի ու հայրենիքի ծա-
 սայութեան նախընտրելու հաստատուն ուխտն
 արած իրենց սրտում: Ինչ խօսք, որ Արո-
 վեանի ու Նազալիեանի օրինակներն եւս սղե-
 ւորութեան անապառ ազրիւրներ էին նրանց
 համար, մի-մի առաջնորդող փայլուն ստող:

Բարերախոտարար, մեզ որոշ տեղեկու-
 թիւներ հասած են գորպտտեան հայ ուսա-
 նողների անհատական ու քնկերական կեանքի
 մասին: Գոհ պիտի լինինք շատ ու երախտա-
 տարա, որ մէկ-երկուսը նրանցից մեծապէս
 զնահատելի գործ են կատարած՝ յետադարձ
 դրի անցրնելով իրենց գորպտտեան յիշողու-
 թիւները: Մասնաւոր շահեկանութիւն ներ-
 կայացնում են մանաւանդ Յիշողութիւնները
 Ալեքսանդր Ռոտլինեանի²⁵, որ ուսանող
 եղած է Գորպատի Համալսարանում 1852 թ.
 յունուար ամսից մինչեւ 1856 թ.: Նա եւս
 եկած էր Լադարեան ճեմարանից ու Գորպա-
 տում հետեւում էր անտեսական զխառ-
 թեանց: Այ. Ռոտլինեանի Յիշողութիւնները,
 թէեւ հակիրճ, բովանդակայից են ու պա-
 րանակում են տեղեկութիւններ ոչ միայն
 Գորպատի հայ ուսանողութեան մասին բնոյ-

²⁵ Տէ'ս ծանոթ. 10, 11:

Հանրապէս, այլ միեւնոյն ժամանակ մեկ տա-
լիս են ծանօթութիւններ իւրաքանչիւր մէկ
ուսանողի մասին առանձին:

Քերտվբէ Պատկանեանի մասին, որ մեկ
մասնաւորապէս հետաքրքրում է այս կա-
պակցութեան մէջ, Այ. Ռոտինեանից ըսում
ենք խիստ չափեկան տեղեկութիւններ: «Իմ
ժամանակակից հայ ուսանողներից», ասում է
նա, «Հայոց լեզուին քաջ տեղեկ էին՝ Այ-
մէնեանց, Պատկանեանք՝ Քերտվբէ եւ Ռո-
փայէլ, եւ մասամբ Մ. Փրիզոնեանց եւ Դո-
դոխեանց»:

Քերտվբէ Պատկանեան, գիտում է Այ.
Ռոտինեան, «որ գիտնական աշխարհում
հռչակուած է իւր նշանաւոր երկերով եւ
մանրակրկիտ քննական հանճարով, Դոր-
պատում իւր վրայ առանձին մի ուշադրու-
թիւն չէր դարձնում, թէ եւ երեւում էր որ
ձիրքերով օժտուած է»: Ռոտինեանի վրայ
Դ. Պատկանեան թուել է «ուշիմ, աչքարոյց»
ուսանողի տպաւորութիւն, մանաւանդ՝ իրրեւ
«զարմանալի յիշողութեան աէր» մէկը, որ
«մեծ հեշտութեամբ տմէն բան սովորում
էր»: Այսպէս, շարունակում է նա «իմ լա-
սին լեզուի վարժապետը, Շէօնրոկ, մի ան-
գամ խօսելով ուսանող Քերտվբէի մասին այն
միտը յայտնեց ինձ, որ բոլոր հայերի մէջ,
որոնց նա դասեր է տուիլ, լուսաւոյն նրան
է համարում: Դժուար սերունները այնպէս
յաջողակ մեկնում էր, որ ինձ միանգամայն

գործադրում էր, մինչև անգամ նախանձս չարժում» :

Գարձեալ. «Ամէն բան սրամտութեամբ բմբունելով, լայն տապարէզ պտրելով իւր գործունէութեան համար, սիրում էր (Ք. Պատկանեան) լուրջ դրբեր կարգալ, սիրում էր բանի մէջ խորատուրուել և բաւալէս բմբունում էր կարգացած գրեանց իմաստը» : Ու Ք. Պատկանեանի սիրած մատենաների թուին է պատկանել նաեւ՝ գործարատեան հայ ուսանողութեան սահմիրաց Խաչատուր Արսիկանի «Վէրք Հայաստանի»ն : Վերջինս, դեռ ձեռագիր վիճակի մէջ, Դորպատ էր տարել իր հետ հեղինակի ձեռնասուռն աշակերտ Գէորգ Աֆիմեանց, ինչպէս պատմում է մեզ սա ինքը իր Յիշողութիւնների մէջ : Այ. Ռոտինեան ևս այդ տոթիւ նկատում է. Արսիկանի «Վէրք Հայաստան»ին, որ նա (Ք. Պատկանեան) շատ գեղեցիկ եղանակով կարդում էր, դրեթէ անդիր գիտէր դեռ այն ժամանակ, երբ տղած չէր, և իրրեւ ձեռագիր Գ. Հաքիմեանցը բերել էր Դորպատ՝ կորուստից աղատելու համար» : «Վէրք Հայաստան»ին, յայտնի է, այդպէս էլ, այսինքն ձեռագիր վիճակում իսկ, կատարեալ յեղաշրջում է ստաջ բերել գործարատեան հայ ուսանողութեան շարքերում :

Ի՞նչպէս էր ուսանող Քերտիւրէ Պատկանեան ընկերակիսն կեանքում, նկարագրի ի՞նչ

զծեր ունէր նա : Այդ մասին եւս հակիրճ տուեալներ ենք պահում մենք Այ. Ռոտինեանի Յիշողութիւնների մէջ :

«Ընկերութիւն շատ էր յարգում եւ ընկերներ ճարելու հետամուտ էր», գրում է նա Քերտրէ Պատկանեանի մասին : «Հայոց նեղ չըջանք նրան բաւարարութիւն չէր տալիս, եւ այս էր պատճառը, որ նա ուրախ սրտով մասնակցում էր եւ գերմանացւոց կոմերձներին (ուսանողական ընկերութեանց հասարակներ), ուր նա իւր վարմունքով եւ համերաշխ գիտումներով համակրելի էր եւ պատուական տեղ էր գրաւել» :

Իր աշխարհայեացքով՝ ուսանող ժամանակ Քերտրէ Պատկանեան եղած է, քսուերիութիւն բուսական տրամադական : «Յնուեալս լինելով», ասում է Ռոտինեան, «նա միշտ ծաղրում էր խոհեմ պահպանողական կուսակցութիւնը եւ ստեղծում էր նոր իդէալներ կեանքի համար, որ յետոյ ինքն էլ անիրագործելի էր համարում» : Ու այդ է եղած պատճառը, որ «թէեւ սրուշուած էր որ նա կուսակրօն պիտի գտնար, բայց ինքը եկեղեցականութեան սէր չուներ եւ նորա կեանքի ընթացքը ամէնեւին համապատասխան չէր հոգեւոր կոչման» : Այս վերջին պարագան անչառակ նկատի ունի յուշագրող Ռոտինեան, երբ գիտում է Ք. Պատկանեանի մասին. «Մեր հասարակութեան մէջ թէեւ այնքան էլ համակրելի չէր իւր կեցեցողութիւնը եւ պահանջով, բայց յարգելի էր իրր

ուշիմ ուսանող, աչքաբաց, բնկերասէր եւ մանաւանդ զուարմասէր, որպիսին մնաց մինչեւ վերջը: Միշտ պարտքով ապրելով, երբ վտոյ էր բնկնում ձեռք, մի քանի օրում վատնում էր պարտքեր բաժանելով, դարձեալ դատարկ էր նստում»:

Պետերբուրգից ստացած իր թռչակը խիտ չափաւոր էր, այն եւս՝ անկանոն, որով Քերովը Պատկանեան — բայց նաեւ Խափայէլ Պատկանեան, Պետրոս Ալմէյնեան եւ գորպատեան ուրիշ թռչակաւու ուսանողներ — շարունակ հարկադրուած է եղել «պարտքով ապրել»: Եւ կամ, ինչպէս որ Քերովը էի հօրեղբորս՝ դարձեալ Պետերբուրգի հացոց եկեղեցական վարչութեան թռչակաւու եւ նորէն գորպատեան ուսանող Խափայէլ Պատկանեանի մօտին է գիտում Խոտինեան, ստիպուած է եղել նա մշտապէս «մեծ գրկանքի մէջ» լինել:

Եւ որովհետեւ ուսանող Քերովը Պատկանեան «եկեղեցականութեան սէր չունէր», փափաղ չէր յայանարեւում հոգեւոր ասպարէզ բնորելու իրեն համար — խի նրան, ինչպէս եւ ոմանց ուրիշների, թռչակ տրուած էր ա՛յլ նկատումով — այդ պատճառով եւ հատկանալի է, թէ ինչու հարկադրուած է լինում նա բնդհատելու իր ուսման բնթացքը Դորպատում: Եւ ահա մի օր էլ յայանում է բնկերներին, թէ պիտի վերադառնայ Պետերբուրգ: «Սորա դարձը մեր ուսանողութեանը զգալի կորուստ էր», ասում է

Ռոտինեան : «Եւ ինքն ըստ երեւութին ուրախ
չէր . պատճառ՝ որ իւր վիճակը իրան տն-
յայտ էր» :

Ընկերները սրաի ցաւով ճանապարհ են
գնում նրան «երկու վերստ Դորպատից գէտ
ի Տիւսիս մի կէս-կոյարան , որ գերմաներէն
Արտասուտայ իջեւան են անուանում» : Այդ-
տեղ «Քերտիրէն վերջին անգամ երգեց մեր
տաջեւ իւր նոր գրած երգը՝ 'Եղբարք ուսա-
նաղնե'ր , ես գնում եմ , մնաք բարեւ , : Եւ հե-
ռացաւ , որ յետոյ սոյգիս համար պարծանք
դառնար» :

Ու այդ րանի՝ «ազգիս համար պար-
ծանք» դառնալու զապալարական հիմը
Դորպատում գրուեցաւ Քերտիրէ Պատկա-
նեանի հոգու մէջ : Իրաւամբ զիտում է Ռո-
տինեան . «Դորպատեան հոտանքի ոգին եւ
եռանդը օր ատաջ աջակցեցին (Քեր . Պատ-
կանեանին) ընտրելու այն գերը , որին ծա-
ռայելով իւր վրայ գրաւեց ուսեալ ու զիտնա-
կան աշխարհի լուրջ ուշադրութիւնը եւ ժա-
ռանգեց փառաւոր անուն» :

14.

Ուսանողի կեանքից եւ մանաւանդ ուսա-
նողական հաւաքոյթներից անբաժան են
եղած միշտ էլ երգն ու երաժշտութիւնը ,
գլուարճութիւնն եւ ուրախութիւնը : Առաւել
եւս՝ , գերման ուսանողի կեանքից : Նա գիտէ
«Եղան նման» պարապել , ուսման նուիրուի ,
բայց զիտէ նաեւ գլուարճանալ , ունի ուրախ

ժամանցի իր երեկոներն ու օրերը: Եւ ուսանողական երգերը, զարեջուրի բաժակների հետ միասին, հինէն ի վեր ազն ու հա՝ ժեմն են եղել այդ ուրախ ժամանցների: Հատորներ են կազմում զերման ուսանողական երգերը:

Դորպատի հոյ ուսանողները վրայ բնականաբար պիտի ազդէր իրենց չրջադատը այդ կազմից եւս: Մերինները նաեւ գիտենք, ունէին իրենց զբաղման հաւաքայթները, ուր քննութեան էին առնում լուրջ հարցեր, գոհացում տալիս իրենց հարցադիտական պահանջներին, ծրարները մշակում աղագոյ զործունէութեան համար եւ այլն: Բայց նրանք ունէին անհոյ հաւաքայթներ, ուրախ ժամանակներ եւս: Իրենց հերթին, նրանք եւս հնչեցնում էին պաւարթ երգեր այդ հաւաքայթներին ու առնում հոյ աղջկոյ գովքը, վառարանում էին Հոյաստանի գինին ու երգում հոյրենիքի վառ կարօտը: Գէորդ Դուրխանն այդ օրերին ու նման առիթներով է զրի առել իր հոգակաւոր «Միծեանակը», Գէորդ Միրիմանեան՝ իր «Հոյոյ աղջիկներ, ձեր հոգուն մաղաղ» սիրտած երգը եւ ուրիշներ իրենց հերթին՝ նման երգեր ու ոտանաւորներ: Այսպէս, զորպատեան կեանքն է գարձնայ թելադրել Ռափայէլ Պատկանեանին՝ գրել «Բաժակներ տանուք, եզրարք, լիք բաժակներ գինով» ուսանողական ծանօթ երգը, այլ եւ «Եզրարք, խմենք գինի հոյ աղջիկ կենացը» ոտանաւորը, եւ այլն:

Քերտփրէ Պատկանեան կենդրոնական
 դէմք էր Դորպատի հայ ուսանողական հա-
 ւաքայթներին — լինէր դրական հանդիպում-
 ների ժամանակ՝ իր յուրջ պատրաստու-
 թեամբ ու գիտական հարցասիրութեամբ,
 թէ ուրախ ժամանցներին՝ իր զուարթ ու բն-
 կերառէր բնաւորութեամբ, զուարճաւոր
 տրամադրութիւններով, բայց նաեւ՝ օրակո-
 յաջողակ երգասաց ու մանաւանդ՝ բանա-
 ստեղծական հակումներէրէն ոտանաւոր-
 ներ յօրինելու բնուէնով մի երիտասարդ ու-
 սանոց։ «Օրինաւոր հայերէն իմանալով»,
 գրում է նրա մասին Ալ. Ռոտինեան իր Դոր-
 փատեան Յիշտգութիւնների մէջ, «նա մեր
 գիտցած երգերը բաւարար չհամարելով,
 մանաւանդ որ մի քանիսը համադաստախան
 չէին Զահէյ սգոյն, գրեց մի քանի զուար-
 ճայի երգեր, որ ինքն ուրախ տրամադրու-
 թեան ժամանակ ստանձին իմն սգեւորու-
 թեամբ երգում էր։ Նորա երգերից — Երբ
 ծխաքաչս ձեռիս, սենեակումս նստած եմ,
 Կոամբամբուլին, Ինձ համար չէ դարեան
 դալը, ինձ համար չէ ծափի ծագիլը, Ու-
 սանողաց կեանքից գեղեցիկ կեանք չկայ,
 եւ այլն, այս բոլորը նորա ուրախ սրտի պտուղ-
 ներն են։ Նրա Երբ ծխաքաչս ձեռիս, —
 իսկապէս կարծես յարմարացրած է իր Զահէյ
 աշխարհայեցողութեան»։

Հայ երգարանների գարգն են կազմել,
 երկար տասնամեակներ շարունակ, Ռա-
 փայէլ եւ Քերտփրէ Պատկանեանի, Դոպո-

խեանի, Միրթմանեանի և այլ զորդատեան-
ների զբաժնու ստանդակաւն երգերը: Դրանք
մեծ մասով քարգմանու քիւններ և կամ փո-
խադրու քիւններ եւ գերմաներէնից, յարմա-
րեցրած: Տայ կեանքին և Տայ ստանդակներ
արամադրութիւններին: Պարագան նայնն է
նաեւ Քերտիւրէ Պատկանեանի անուանով մեզ
հասած երգերի ու ստանդակներին:

Գամաս-Քաթիպայի «Ազգային Երգա-
րան»ը, լոյս տեսած Պետերմուրզում տակա-
ւին 1856 թ. այսինքն մեր աշխարհի զբա-
նդանութեան մանկութեան օրերին գեա, իր
մէջ պարունակում է մի չարք երգեր ու ստա-
նդակներ՝ ելած Քերտիւրէ Պատկանեանի
գրչի տակից: Միք. Միանսարեանի «Քնար
Հայկական»ի, ինչպէս նաեւ ուրիշ ծանօթ ու
աւարածուած երգարաններին մէջ ևւ մի-մի
զարդ են կադմել, երկար, շատ երկար տա-
րիներ, այլ ստանդակները: Դրանք երգուել
են մինչեւ մեր օրերը, մի քանիսը չարունա-
կում են երգուել ևւ այսօր, անծանօթ չեն
մինչեւ իսկ նոր սերունդին:

Այսպէս, Քերտիւրէ Պատկանեանի գրչի
տակից են ելած, Դորդաստ քաղաքում.
1. «Վերջին վարդ» ստանդակը (որ սկսում
է «Վերջին վարդ, վերջին վարդ, սիրականիս
վերջին վարդ» բառերով), 2. «Քնձ համար չէ
դարնան դարդ» ծանօթ երգը, 3. «Ծխախոտի
երգը» («Երբ ծխաքաշս ձեռիս...»), 4. «Ու-
սանդ» և 5. «Ուսանդի կեանքը» ստանդակ-
ները (որոնցից ստաջինը սկսում է «Այն ի՞նչ

աղղ է, այն ի՞նչ ցեղ է, որ միշտ անկախ է», իսկ երկրորդը՝ «Ուսանողի կեանքից զեղեցիկ կեանք չկայ» բառերով), 6. «Կենաց բաժակ»ը («Եղբարք, իմ շուրջ ժողովեցէք . . .»), 7. «Կսամբամբուլի»ն («Կսամբամբուլին էս էն օդին է . . .»), 8. «Հայոց գինի»ն²⁶, բարուն էլ՝ ուսանողական ուրախ ժամանցներին յատուկ երգեր: Այդ և. նման երգերն է որ Այ. Ռոսինեան անուանում է ուսանող ֆերովրէ Պատկանեանի «ուրախ սրտի պոսուղներ»:

Ք. Պատկանեան Դորպատում գրի է առել և. ուրիշ ուսանաւորներ, որ մասամբ կամ ամբողջովին տարրեր տրամադրութիւնների արդասիք են: Յիշատակել պէտք են՝ 9. «Մայրիկ իմ աղաւնիկ, լոյս արեգական», 10. «Արանց հետ պատերազմի», 11. «Անտօն» («Մէկ հայ մարդ ունէր զեղեցիկ մի կին . . .»), 12. «Հին շոր» («Ինձ զի՞ մոտաճաս, հին շոր, որին սիրել եմ . . .») ուսանաւորները, վերջապէս 13. «Եղբարք ուսանողներ, ևս զնում եմ, մնաք բարեւ»ը, որի մասին խօսք եղաւ վերը, և. որ գրի է առել Ք. Պատկանեան Դորպատին ու իր ուսուցիչից ընկերներին հրաժեշտ տալու առթիւ, երգել անձամբ, վերջին անգամ, նրանց բնակրութեան մէջ: Ինչպէս ասացինք, մեծ մասով գրանք փոխադրութիւններ են զերմանական

²⁶ «Հայոց Դինի» երգը վերագրողներ կան նաև. Բրիտանիոյ Առաջնորդ, որ հին դորպատեաններից էր, 1844—1850 թ. հետևած բժշկական գիտութեանց: Կողանի Համալսարանից էր նա եկած Դորպատ:

ուսանողական երգերից, իսկ մի երկուսը՝ սուսերէնից («Կոստրամբուլին», «Մայրիկ իմ») :

Այս բնոյթն ունին Քերտվըլ Պատկանեանի գրչի տառջին փորձերը²⁷ : Ուրախ, զուարթ երգեր : Շատ տարիներ չանցած՝ զխտական ներհուն միտքը եւ հետադոտող ոգին յաղթող հանդիսացան հանդէս վառ-վառն խառնուածքի ու բանաստեղծական հակումները՝ նոյն անձի մէջ : Քերտվըլ Պատկանեանի ոտանուորներն ու երգերը, որչափ եւ փոքրաթիւ ու ոչ բոլորն ինքնուրոյն, անխղիւի կերպով կապուած պիտի մնան, ի հարկէ, նրա անուան հետ²⁸ : Ինչ որ կադմոս է սակայն իր բուն իսկ էութիւնը, առանձնացատուկ գիմադիւծը հայ մտքի զարգացման պատմութեան մէջ, այդ՝ նրա թու-

²⁷ Տակաւին Ստարոպոլի գիմնազիոյի վերջին դասարանը՝ զրահանութիւն նախադրող աշակերտ, Ք. Պատկանեան զրել է աւարտական շարադասութիւն «Կանտեմիրի» երգիծարանութեան մասին, որ եւ իր սուսչի խրախոյսով ապսեւ է «Ստարոպոլի նահանգական թերթ»ի մէջ (1853, թիւ 2), զրում է Վեսելովսկի («Նաղմավէպ», 1891, էջ 142) : Վերջինիս տակաւ՝ Ք. Պ. Գորպատուս եղած ժամանակ թարգմանել է Գեօթիկ, Շիլլերի եւ Բերանթէի մի բանի բանաստեղծութիւնները եւս :

²⁸ «Հիստորիոյ»ի 1858 թ. երկրորդ ամսատետրի մէջ (էջ 1—10) Բեսալէն ծածկանուան տակ, որ Ք. Պատկանեանինն է, տպագրուած է «Հայաստանի ազգի՛կ» վերնագրով մի շափածոյ զրումք : Սկսում է՝

«Մի գեղեցիկ ազգիկ անայ Հայաստան,

Որ միայնակ ման էր գալիս գիշերը»

տպերով : Անի կէս-պատմական եւ կէս-կենցաղական բովանդակութիւն — Համբարձման վիճակ, հայ գեղջուկ ազգիկներ ու նման աւարաններ : Մի տեսակ նախնական նմուշը՝ Բովէ. Թումանեանի «Անուշ»ի :

— արքային պարզապէս ասացի՝ ինչպէս
դու քեզ համարում ես, եւ ինչպէս
դու քեզ պարգևատրում ես։ Եւ
արքայի պատասխանը եղաւ՝
« Ինչպէս քեզ համարում ես, եւ
ինչպէս քեզ պարգևատրում ես »։

ՔԵՐՈՎՐԷ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒ- ԹԻԻՆՆԵՐԸ

Ա. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻԻՆՆԵՐ

1. Մխիթարայ Այրիվանկացւոյ Պատմութիւն ժամանա-
կադրական. 1867:
2. Մաղաքիայ Արեղացի Պատմութիւն վասն Ազգին
Նշատցայ. 1870:
3. Անանիայ Շիրակունւոյ Մնացորդք բանից. 1877:
4. Պատմութիւն Սեբէսի և Սկիզբն Պատմութեան
Մխիթարայ Անեցւոյ. 1879:
5. Փռատտար Բաղանդացւոյ Պատմութիւն Հայոց. 1883:
6. Նշխարք ժառենադրութեան Հայոց. 1884:
7. Յարութիւն վարդապետի Ալամդարեանց Չափարե-
րականք. 1884:
8. Թովմայի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրու-
նեայ. 1887:

Բ. ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻԻՆՆԵՐ (Խալիբէնից)

1. (9). Исторія Агванъ Монсея Каганкатвацц. (X. вѣка). 1861 (Մ. Կաղանկատուացի):
2. (10). Исторія императора Иракла. Соч. епис-
копа Себеоса (VII в.). 1862 (Սեբէոս):
3. (11). Исторія Халифовъ Гевонта (VIII. в.) 1862
(Ղևոնդ):
4. (12). Хронографич. Исторія Мхитара Айри-
ванскаго (XIII. в.). 1869 (Մխիթար Այրիվանկցի):
5. (13). Дневник осады Испагана Афгаками
(XVIII. в.). 1869:

6. (14). Исторія Монголовъ инокъ Магакіа (XIII. вѣка). 1871 (*Մագակիայի Արեղայ*):
7. (15). Арм. Географія VII. вѣка (Монсея Хор.). Текстъ, переводъ и примѣчания. 1877 (*Աշխարհագրութիւն Մ. Խորենացւոյ, Հայ բնագիր և ռուս. թարգմանութիւն*):
8. (16). Из новаго списка географіи Хоренскаго. 1883:

Գ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. (17). Catalogue de la littérature arménienne depuis le commencement du IV. siècle jusque vers le milieu du XVII. 1860:
2. (18). Опытъ Исторіи династіи Сассанидовъ. 1863 (*Կասամ Սասան. Հարսուսթեան*): *Ֆրանսերէնը*՝ 1886 (*Journ. Asiat.*):
3. (19). Изслѣдованіе о составѣ арм. языка. 1864 (*Կազմութիւն Հայ. լեզուի*): *Ֆրանսերէնը*՝ 1870 (*Journ. Asiat.*):
4. (20). Über den armenischen Dialect von Agulis. 1865 (*Ագուլիսի բարբառը*):
5. (21). Изслѣдованіе о діалектахъ арм. языка. 1869 (*Ուսումնաս Հայ. բարբառների*):
6. (22). Нѣсколько словъ о названіяхъ древнихъ Арм. Мѣсяцев. 1871. (*Հին Հայոց ամիսների անունները*):
7. (23). Исторія Монголовъ по Арм. источникамъ (XIII. в.) I. 1873. (*Պատմութիւն Խոնղուների, բայ Հայկ. աղբիւրների*):
8. (24). Նոյն՝ II. 1874:
9. (25). Замѣчаніе на статью „Вахагнъ-Вишапакахъ“. 1873 (*Վախաղն Վիշապաքաղ*):
10. Драгоценныя Камни, ихъ названія и свойства по понятіямъ Армянъ в XVII. в. 1873 (*Թանկազին քարերը բայ Հայոց բժրոնման*):

11. (27). Матеріалы по изученію Арм. нарѣчій. I. Говоръ Нахичеванскій. 1875 (*Նխիջևանի բարբառը*):
12. (28). *Նոյն* II. Мушскій діалектъ. 1875 (*Բ. Մուշի բարբառը*):
- ✓ 13. (29). О мѣстѣ, занимаемомъ Арм. языкомъ въ кругу индоевропейскихъ. Тифлисъ 1879 (*Հայերէնի զբաղած տեղը Հնդեւրոպ լեզուների շարքում*): *Նոյնը Հայերէն* 1880 («*Փորձ*»), *գերմաներէն* 1880 (Russ. Revue):
14. (30). Библіограф. Очеркъ. Арм. историч. литературы. 1879 (*Մատենագիրտ. Հայերէն պատմ. գրականութեան*): *Նոյնը Հայերէն* 1880 («*Փորձ*»):
15. (31). О мѣстомъ походѣ Такладъ-Паласара къ берегамъ Инди. 1879 (*Թակլատ-Պալատարի կարծեցեալ արշաւանքը դէպի Ինդոսի ափերը*):
- ✓ 16. (32). Ванскіе надписи и значеніе ихъ для истор. передн. Азіа. 1881. (*Վանի արձանագրութիւնները*):
17. (33). Матеріалы для арм. Словаря. I. 1882 (*Նխիջևանի հայ բառարանի համար*):
18. (34). *Նոյն* II. 1884:
19. О клинообр. надписяхъ Ванской системы, откр. въ предѣлахъ Россіи. 1883 (*Ռուս. սահմաններում գտնուած վանեան բեւեռ. արձանագրութիւնները*):
20. (36). Ванскіе надписи. Глава V. О древней Груз. Хроникѣ. 1883 (*Վանի արձանագրութիւնները*):
21. (37). Цыганы. Нѣск. словъ о нарѣч. Кавказск. цыганъ: Боша и Карачи (*Կովկ. գնչուների բարբառները*):

Բնոր կրտսերակուրիւնները, բացառու բնագր
Թիւ. 13 (29), տպագրուած են Ս. Պետերբուրգում:

ՀԵՂԻՆԱԿԻ ԴՈՐՊԱՏԵԱՆ ԱՇԽԱՏՈՒ- ԹԻՒՆՆԵՐԸ

(Դիւանական-վաւերագրային աղբիւրների.
հիման վրայ)

Ա. ՀԱՅԵՐԷՆ

1. Դորպատի Հայ աւանդութիւնը (Աղղ. Մատ.,
Հատ. 150), Վիեննա 1942:
2. Քերտիքի Պատկանեան Դորպատում (Աղղ. Մատ.,
Հատ. ***), Վիեննա 1949:

Հետզհետէ լոյս պիտի տեսնեն

3. Դիւան Դորպատի Հայ աւանդութեան (ժողովա-
նայ վաւերագրային):
4. Դորպատ և Հայաստան:
5. Խաչատուր Աբովեան և Դորպատ:
6. Ստեփանոս Նազարեան Դորպատում:
7. Գէորգ Դոյրիսեան Դորպատում:
8. Դէպքի Դորպատ (Քննադատական Ուղեգրութիւն):

Բ. ԳԵՐՄԱՆԵՐԷՆ

9. Chatschatur Abowian.
10. Dorpat und Armenien.

Պատրաստ է տպագրութեան համար

ԳԵՕԹԷ ԱՐՁԱԿ ԵՐԿԵՐ

ՀԻՆԳ ՀԱՏՈՐ

Ա. Պատմաւածքներ :

Բ. Վերթեր (համակալվել) : — Յիսուսն ասորեկան
մարդը (վէպիկ) :

Գ. Համակցութիւններ (Մղջախոհութիւն) : Վէպ :

Դ. Թատրերգութիւններ (Կլաւիգո : — Սաէլլա : —
Քոյր և Եղբայր : — Էդմոնս : — Իֆրիկենիա) :

Ե. Մտքեր և խոհեր (Իմաստախօսութիւններ : —
Լեւոյիտներ : — Նամակներ : — Քննասիրութիւն-
ներ) :

Թարգմանութիւնը կատարուած է գերմաներէն
լնագրից՝ հիմ ունենալով քննական-գիտական հրա-
տարակոթիւններ :

Հատորներն օժտուած են՝ ներածականներով,
ձեռնօթութիւններով, ցանկերով և բառթերթերով) :

Պատրաստութեան մէջ է. որպէս առանձին հատոր

ԳԵՕԹԷ. ԻՐ ԿԵՂԵՔԸ ՆԻ ԴՈՐԾԵՐԸ

աշխատութիւնը

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

- ՃԼԴ. Ակիմեան Հ. Ն., Դատական հայերէնն եւ Վիեննական Միութեան Դպրոցը, 1932: էջ 387: Ձր. 4.—
- ՃԼԵ. Ակիմեան Հ. Ն., Երեմիա Չէլէպի Բէօմլըքեան. կէսնքն եւ դրական գործունէութիւնը. մատենագրական ուսումնասիրութիւն: 1933: էջ 280: Մէկ պատկերով: Ձր. 3.—
- ՃԼԶ. Տաշեան Հ. Յ., Հայ ազգի տարադրութիւնը դերմանական վաւերացիւթիւնը համեմատ: Մասն Ա. 1921: էջ Ժ + 241: Ձր. 3.—
- ՃԼԻ. Տաշեան Հ. Յ., Հաթեր եւ Ուրարտեանք. մատենագրական ուսումնասիրութիւն: 1934: էջ Բ + 343: Ձր. 3.—
- ՃԼԸ. Սարուխան Ա., Ա. Ֆիրդուսի եւ Մովսէս Խորենացի: Բ. Firdowci et l'influence iranienne dans la littérature géorgienne. 1936: էջ 62 + 63—106: Ձր. 1.—
- ՃԼԹ. Ակիմեան Հ. Ն., Մովսէս Գ. Տաթևացի կաթողիկոս Հայոց յէջմիածին եւ իւր Ժամանակը (1577—1633): Նպաստ մը Հայոց Եկեղեցւոյ պատմութեան: 1935: էջ 450: Ձր. 4.—
- ՃԽ. Ակիմեան Հ. Ն., Եղիշէ վարդապետ եւ իւր Պատմութիւնն Հայոց պատերազմին. քննական ուսումնասիրութիւն: Հատոր Բ. 1936: էջ 400—806: Ձր. 4.—
- ՃԽԱ. Ակիմեան Հ. Ն., Սիմէոն դարի Լեհացւոյ Ուղեգրութիւն: Նկարագիր ուղեւորութեան ի վրովէ ի Կ. Պոլիս, ի Հռոմ, ի Մուշ եւ յերուսաղէմ յամսն 1608—1619: 1936: Ձր. 4.—
- ՃԽԲ. Խապալեան Հ. Պ., Տատիանի Համարարարուր եւ հայերէն տւետարաններու առաջին թարգմանութիւնը, Վիեննա 1937, էջ Բ + 127: Ղ. Ֆր. 1.—
- ՃԽԳ. Սարուխան Ա., Բելլիոս եւ Հայերը, Վիեննա 1937, էջ Բ + 253: Ղ. Ֆր. 3.—
- ՃԽԴ. Թորգոմեան Գևորգ. Վ., Երեմիա Չէլէպի Բէօմլըքեան Ստամպուլոյ պատմութիւն, հտ. Գ. Վիեննա 1938, էջ ԻԸ + 194: Ղ. Ֆր. 3.—
- ՃԽԵ. Ակիմեան Հ. Ն., Մատենագրական հետազոտութիւններ. հտ. Գ. Վիեննա 1938, էջ Ժ + 406: Ղ. Ֆր. 4.—
- ՃԽԶ. Սարուխան Ա., Վրաստան եւ Հայերը, հտ. Ա., Վիեննա 1940, էջ Բ + 291: Ղ. Ֆր. 4.—

- ՃԽԷ. Էյսապալեան Հ. Պ., Դիտերիսիս Բարսաղերի,
ասորերէնէ թարգմ., Վիեննա 1939, էջք 112:
զ. ֆր. 1.—
- ՃԽԸ. Երեմեան Ա., Թիֆլիսի Հայոց Պանթէոններու
Վիեննա 1940, էջք Դ + 112: զ. ֆր. 1.—
- ՃԽԹ. Ոսկեան Դկտ. Հ. Հ., Վասպուրական-Վանի
վանքերը. հտ. Ա. Վիեննա 1940, էջք + 384:
զ. ֆր. 5.—
- ՃԽ. Արեղեան Դկտ. Ա., Դսրբատի Հայ ուսանողու-
թիւնը, Վիեննա 1942, էջք 44: զ. ֆր. 1.—
- ՃԽԱ. Ոսկեան Դկտ. Հ. Հ., Վասպուրական-Վանի
վանքերը. հտ. Բ. Վիեննա 1942, էջք Ժ + 350:
զ. ֆր. 5.—
- ՃԽԲ. Ինգլիզեան Դկտ. Հ. Վ., Հայաստան Սուրբ
Գրքի մէջ, Վիեննա 1947, էջք ԽԷ + 233:
զ. ֆր. 4.—
- ՃԽԳ. Ոսկեան Դկտ. Հ. Հ., Սարգիսի Ժողովրդի
Հայերէն կանոնները, Վիեննա 1945, էջք Հ +
132: զ. ֆր. 4.—
- ՃԽԴ. Ոսկեան Դկտ. Հ. Հ., Սերաստիացի վանքերը:
Ա. մաս. Սերաստիա քաղաքի վանքերը: Վիեննա
1946, էջք ԺԱ + 79: զ. ֆր. 2.—
- ՃԽԵ. Ոսկեան Դկտ. Հ. Հ., Վասպուրական-Վանի
վանքերը. հտ. Գ. Վիեննա 1947, էջք Է +
743—1134: զ. ֆր. 5.—
- ՃԽԶ. Տաշեան Հ. Յ., Հին Հայաստանի արեւմտեան
սահմանը՝ Փոքր-Հայք եւ Կողովնէ (Սերա-
տիա): Վիեննա 1948, էջք Ը + 492: զ. ֆր. 6.—
- ՃԽԷ. Ակիմեան Հ. Ն., Տեսիլ Ս. Սահակայ. մատե-
նագրական-պատմական քննութիւն: Վիեննա
1948, էջք Ը + 93: զ. ֆր. 1.—
- ՃԽԸ. Ակիմեան Հ. Ն., Ս. Մաշտոց վարդապետ.
կեանքն եւ զործունէութիւնը. հանդերձ կենսա-
դրութեամբ Ս. Սահակայ: Վիեննա 1949, էջք
ԺԱ + 473: զ. ֆր. 6.—
- ՃԽԹ. Ակիմեան Հ. Ն., Բրիտանեկութեան մատքը
Հայաստան եւ Վրաստան. «Գերի Կինը», Ս.
Հոփսթիմէ եւ Ս. Նունէ: Վիեննա 1949, էջք
ԺԱ + 348: զ. ֆր. 5.—

Հասցէ՝

ՄԻԽԻԹԱՐԵԱՆ ԳՐԵԱՆՔԱՆՈՑ
Librairie des Pères Mechitharistes
Vienne VII/62, Mechitaristengasse 4 (Autriche)



ԳԻՐԸ՝ զաւից. ֆր. 1.—:

A $\frac{\pi}{80219}$